

ԿՈԼՏՆՏԵՍՈԱԿԱՐ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
Բ Ա Ն Վ Ո Ր Ի Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՖ. Մ. Ա. ՆՈՎԻԿՈՎ-ԳՈԼՈՎԱՆԻ

Պ Տ Ղ Ա Տ Ո Ւ
Տ Ե Կ Ա Ր Ա Ն

ԳՅՈՒՂՑԻԱ 1936 ՅԵՐԵՎԱՆ

634.1	552
u-91	Spuriflora - 9-petaled Flowers - 5-petaled

1936. 701
11 VI | 5 VI 588

ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀԱԿԱՆ ՑԵՎ ԽՈՐՀԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

634.1/7 : 631.537

3-91



ՊՐՈՖ. Մ. Ա. ՆՈՎԻԿՈՎ-ԳՈԼՈՎԱՏԵՎ

Ապրիլի 1 1986 թ. ԱՐՄԵՆԻԱ

ՊՏԼԱՏՈՒ ՏՆԿԱՐԱՆ

634.1/374

A 18731

ԽՈՐԴԱԿԱՆ Ա. Ա. ԽՈՐԴԱԿԱՆ Ա.



ԳՅԱՆԴՐԱՎԱՐ ● 1986 ● ՁԵՐԵՎԱՆ

ԵՆԹԵՐՅԱԴՆԵՐԻՆ

Այս գրքույկը նտիսատեսված և պատղաբուծության ասպարիկում պլրակտիկ աշխատողի և առաջին հեղթին կոլտնտեսական և խորհանտեսական բըիզադիրի համար:

Այստեղ բնթերցողը կգտնի պատղատու անկարանի կազմակերպման և տնկիների աճեցման ու խնամքի վերաբերյալ գործական տնհրաժեշտ ցուցումներ:

Խոդրում ենք բոլոր դիտողություններն ու կարծիքներն ուղարկել հետեւյալ հասցեյով.

Յերեան, Նալբանդյան փողոց № 11, Գյուղհերատ:

ՔՅՆՉ Ե ՊՏՂԱՏՈՒ ՏՆԿԱՐԱՆԸ

Այդի տնկելու կամ, ինչպես ասում են, այդի գուելու համար անհրաժեշտ ե ուսենալ արդեն բավական զարգացած, աճ-քացած ըռույսեր՝ տնկիներ Տնկիներն աճեցվում են պատպատռ տնկարան կամ, կարճ ասած, պտղատնկարուն կոչվող անտեսական հատուկ հողամասներում:

Պտղահատապտղային տնտեսության տարրեր ճյուղերից տնկարանային գործն ամենանդվարեններից մեկն ե: Ինչպես տնկա-րան կազմակերպելու, այնպես և նրանում տնկիներ աճեցնելու գեղգում պահանջվում ե խոշոր գիտություն և առանձնակի հմտություն:

Այս գրքույկում տրվում են հիմնական գուցումներ, քե ինչ-պես նիշ ու նպատականություն ձեվով պետք ե կազմակերպիլ պտղա-ռու տնկարանը յեվ ինչպիս խնամել այն, վորպեսզի ապահովվի լա-զագույն տնկիների աճեցումը:

ՊՏՂԱՏՈՒ ՏՆԿԱՐԱՆԸ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Պտղառու տնկարանի տեղի ճիշտ ընտրությունը պահի չա-փոք ապահովում ե նրա աշխատանքի հաջողությունը Տեղի ընտ-րության ժամանակ անհրաժեշտ ե նկատի առնել հետեւյալը.

1. Նպատակահարժար և տնկարանը կազմակերպել միայն այնտեղ, ուր պտղառու տնկանյութի պահանջ կա, իսկ տնկարա-նի տարածությունը գորոշել՝ հաշվի առնելով այդ պա անջի չափը Հեռավոր փոխադրումները խիստ թանգացնում են տնկառնյութը, Վորովինետի, ցրտից, չորությունից ու ճանապարհին կոտրվելուց վշանում են Այս իսկ նկատառումներով տնկարանը պետք է կազմակերպել ըստ հնաբավորին յերկաթզծին և խճուղիներին մոտ:

2. պտղատնկարանի տեղը պետք եւ հարթ լինի. խորդուբարդություններն անթու յլատրելի յեն. Անհարթությունները գծվարացնում են գյուղգործիքների գործադրումը տնկարանում. Այդ անհարթությունները հողամասի տարրեր տեղերում անխռուսափելիորեն առաջացնում են տնկինների անհավասարդարգացում, իսկ այդ միանգամայն անցանկալի յեւ Ընդհակառակը, տնկարանը պետք եւ զորքան կարելի յեւ միակերպ և լավորակ լինի. «Միանման տնկիններ»—այս և ճիշտ աշխատող պաղատնկարանի նշանաբանը.

3. հողակտորի ընդհանուր հարթության հետ միասին, ցանկալի յեւ նրա աննշան թեքությունը դեպի հարավ-արևմուտք, արևմուտք կամ հարավ, վորովհետեւ այդ թեքությունների վրա բույսերն առավոտյան ցրտերից քիչ են տուժում. Կանոնավոր վոռոգումն ու հողի վերին շերտը լվացումից ապահովելու համար, նշված թեքությունների դեպում, տնկարանի շաբաթերն անպայմանորեն պետք եւ դասավորել աելյափին հորիզոնական ուղղությամբ:

Թեքվածքը թույլ չի տալիս, վոր ջուրը լնանա, այս գեղքում բույսերը վատ են զարգանում: Խիստ թեքվածքները տնկարանի համար պիտանի չեն, քանի վոր դժվարացնում են հողի մշակությունը. բացի դրանից, հողի մակերեսի շերտն ու նրա մեջ յեղած անդարար նյութերը լվացվում են անձրեից, գարնանային գեղեցներից.

4. հարավի պայմաններում տնկարանի հողամասը պետք և անպայման ապահովված լինի, վոռոգման ջրով.

5. տնկարանի համար հողամաս ընտրելիս, պետք եւ խռոսափել այնպիսի հողահատվածներից, ուր ստորերկրյա ջրերը հաղի մակերեսին մտտ են.

6. անհրաժեշտ, վոր տնկարանի հողամասը պաշտպանված լինի ցուրտ և խիստ քամիներից: Յեթե տնկարանը բնականից պաշտպանված չե (բարձրություն, անտառ), իսկ մնացած բոլոր կումերով հողակտորը միանգամայն համապատասխանում է տնկարանի պահանջներին, այս դեպում հարկավոր եւ ստեղծել արհետական կանոնականի պատճեց.

7. տնկարանի համար պետք եւ ընտրվեն.

ա) սենյարաց նյութերով նարուս հողեր, քանի վոր տնկինները միայն նման հողերի վրա յեն հաջող ու արագ աճում: Պետք եւ իմանալ, վոր տնկինները իմաստ աբագ են հյուծում հողը.

բ) խարը նողեր, քանի վոր այս ղեպքում միայն տնկիները կարող են փարթամ արմատային սիստեմ զարգացնել.

գ) համարակորության սահմաններում մշակության նամար քերել նողեր.

դ) մոլախոտերից ազատ հողեր:

Տնկարանի համար լավագույն հողեր են համարվում հումուսով բայականաչափ հարուստ ավաղուտ սեահողերը, ավաղակավային և կավա-ավագային հողերը: Սակայն պետք է նկատի առնել, վոր զյուղատնտեսության այնպիսի բնագավառներում, ինչպիսին են այգեգործությունն ու բանջարաբուծությունը, հողը մեծագույն չափերով ստեղծվում է հենց իր մշակության ընթացքում, հետևապես լավագույն պարարտացման և ճիշտ մշակության պայմաններում կարող են ոդտագործվել նաև համեմատարար ցածրորակ հողերը: Ճահճացած, տորֆային, աղուտ և քարքարոտ հողերը պտղատնկարանի համար միանգամայն անպետք են.

8. աեղի ընտարության ժամանակ վոչ միայն ուշադրություն պիտի դարձնել հողի, այլև յինքանողի վրա. վերջինս պետք է ունենա լավ ջրաթափանցկություն, վոր գեսպի ավելորդ ջուրը նրա մեջ չկուտակվի, հակառակ պարագային տնկիները կտուժեն և հեղտությամբ կցըտահարվեն.

9. տնկարանը կազմակերպելիս պետք է հիշել, վոր հողամասի ընտարության գեպքում թույլ արգած բոլոր տեսակի սխալները մեծ մասամբ անուղղելի յեն, վոր նրա կազմակերպումն ու պահպանումը թանգ արժե և նրա արտադրանքն աժան չեն:

Այս գործին անհրաժեշտ է մոտենալ ամենայն լրջությամբ մտածված կատարել այն և հենվել գործին տեղյակ և փորձառու մարդկանց ցուցմունքների ու հողամասի հետազոտությունների պայմանը վրա:

Նախեառաջ նկատի առնելով վերը թված ցուցմունքները, ցանկալի յետնտեսության սեփական ուժերով նշագիծ համապատասխան հողահատվածներ, վորից հետո նրանց միջև՝ մասնագետների հետ միասին՝ կատարել վերջնական ընտրությունն Այստեղ կարեոր է հաշվի առնել հողակտորների տարրեր կուբառաների բերքատվությունը, յեթե դրանք մշակվում են, իսկ յեթե մարդագետնային վայրեր են, ապա խոտի առատությունն ու նրա բազմագանությունը նմանապես պետք է հաշվի առնել անձրեների և գարնանը հալչող ձյան ջրերի հոսանքի աւժն ու ուղղությունը և սաղըերկրյա ջրերի բարձրությունը:

ինչպես կտողացել տնկարանի եժանագին ու հուսալի զանկապաս.—Տնկարանը քամիներից, ինչպես նաև անսառուններից ապահով պահելու համար, սովորաբար նրա կազմակերպման սկզբից, Էղակառորի հատակագծումից հետո տնկում են կենզանի ցանկապատ: Այս ցանկապատի ծառերի և թփերի տեսակները տարրեր հողային ու կլիմայական պայմաններում տարրեր են լինում:

Ամբողջ տնկարանի շուրջը տնկվող ծառերը պետք է ունենան անհամեմատ ավելի ուժեղ աճեցողություն քան առանձին-առանձին հողակտորների շուրջը տնկվող պատնեշի ծառերը և թփերը:

Ցանկապատի, կամ կենդանի պատնեշի համար սովորաբար լավ ե գործածել հետեւյալ ծառերը և թփերը. բարդենի, գլեղիչյա, ակացիա, վայրի տանձենի, փշատենի, սիրենը, հաղարջենին, վայրի վարդենին և այլն:

Ամբողջ տնկարանի շուրջը տնկվող ծառերը տնկել Յ—Գ շարք՝ մեկից մեկներու մետր հեռավորությամբ շախմատային ձևով: Պիտի տնկել սկզբում ուժեղ աճեցողություն ունեցող ծառերը, ապա ներսի կողմում նրանից թույլ և վերջապես ամենից թույլ աճեցողություն ունեցող ծառերը, այնպես վոր ստեղծվի անանցնելի մի պատնեշ թե կենդանիների և թե մարդկանց համար: Լավ կլինի այս պատնեշի շուրջը դրսի կողմից յերկաթյաց անցով շրջապատել՝ նստպաստակներից և մյուս կրծողներից տնկարանը պաշտպանելու համար:

Տնկարանի ներսի առաջին հողակառորների շուրջը ցանկապատի թփերը, կամ ցածրադիր ծառերը պետք է տնկել 0,6 մինչև մեկ մետր հեռավորությամբ, դարձյալ շախմատային ձևով՝ 2—3 շարք: Ցանկապատի տնկումից հետո պատրաստել վոռոգող պուռներ և ջրել:

Ինչպես պատասխել զանկապատը.—Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ցանկապատի ձեավորման աշխատանքների վրա, տնկումից անմիջապես հետո կատարել ետ, ապա ամեն տարի հեռացնել չօրուկները և ափելորդ բոլոր ճյուղերը, մանավանդ այն ճյուղերը, վորոնը ցանկապատի սահմանից դուրս են աճում: Ձեավորությունները կատարել այնպես, վոր ցանկապատի մեջ յեղած բույրը բաց ապահովությունները ծածկվեն ծառերի և թփերի ճյուղերով:

Ժամանակին կատարել ցանկապատի խնամքի համար պա-

հանջլող բոլորազբո ձեռնարկութերը, ինչպեսիքն են՝ փխրեցումը, քաղճանը, ջրելը, առուների վերանորոգումը, բռւժումը և այլ աշխատանքները, վորոնք նախատեսված են ովայլ շրջանի ագրոկանոններով:

ԲՈՒՑԱՐԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԶԵՎԵՐԻ

1. Բույսերի սերմերով (սեռական կամ վերարտադրական) բազմացումը

Ինչպես բնության մեջ, այնպես և արհեստական ճանապարհով (մարդու միջոցով) բուծելու դեպքում, բույսերը բազմացվում են յերկու ձևով. ա) սերմերով և բ) բույսի մասերով (ճյուղերով, արծատներով և այլն):

Սերմերն ստացվում են պտուղների մեջ սեռական պրոցեսի (փոշուման) հետևանքով, դրա համար ել սերմերով բազմացումը կոչվում է սեռական բազմացում:

2. Բույսերի անսեռ (վեգետատիվ) բազմացումը

Բնական պայմաններում բավական լայն առօրածված ե բույսերի անսեռ բազմացման յեղանակը. որինակ՝ յեւկը իր ցողուններից արձտկում և յերկար ու բարակ ընձյուղներ—ընթիրներ, վորի միջանգույցներից զարգանում են նոր բույսեր: Քիչ չի պատահում, վոր ծառերը և հատկապես թփերն իրենց արմատներից և դետնին կալչող ցողունի մասերից արձակում են ծիլեր (մացառներ):

Այս կերպ հեղտությամբ աճում ու մացառակալում են վառինամված բարինիները, մալինան և մի շարք այլ բույսեր:

Բազմացման այս ձևը գիտության մեջ վեգետատիվ անունն է կը ուժ:

3. Սերմերով յեւ վեգետատիվ յեղանակով բազմացման կիրառումը պտղատու տնկարանում

Պտղատու տնկարանում հարկ է լինում սղագել վերը նկարագրած բազմացման յերկու ձևից ել:

Ինչպես հետագայում կտեսնենք, տնկարանի հիմնական մասը հանդիսանում է պտղատու ծառերի վայրակների սերմերով բազմացման բաժինը:

Մյուս կողմից՝ վորոշ պաղապառ ծառերի զարգացման համար պաղաբուծներն ոգտվում են կտրոններով բազմացումից, արմատային մացառներից, առանձին արմատների մասերից, անդամագմացնելու ձևերից և այլն.

ԳՏՂԱՏՈՒ ՏՆԿԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԵՐԸ

Պաղատառ տնկարանը ճիշտ կազմակերպելու համար, պետք է նկատի առնել տնկարանի տիպը, նրա հիմնական մասերը, վերջիններիս գերն ու փոխնարքերությունը. Տնկարանի հողամասի կազմակերպումը կախված է տվյալ տնկարանի տիպից, մշտական և այն, թե ժամանակավորը: Մշտական տիպի տնկարաններն իրենց հաղմում պիտի ունենան—1) բազմացման հողամաս (վայրակների բազմացման տեղ), 2) ձևավորման հողամաս կամ հենց ինքը՝ անկարանը (մշտական հողամասը՝ այդին փոխադրվելիք տնկիների աճեցման ու խնամքի տեղը), 3) մայրական այգի (այն աեղը, զորոեզից պատվաստի համար կտրոններ են վերցնում):

Ժամանակավոր տիպի տնկարանները կարող են բազմացման և մայրական այգու հողամասեր չունենալ և վայրակներն ու կտրոններն ստանալ այլ տեղերից:

Ժամանակավոր կազմակերպվող տնկարաններում կարող է ցանքաշրջանառություն չլինել զորովճետե որանք մեծ մասամբ առնանագծվելու յեն մեկ կամ յերկու անդամ անկանյութ արտադրելու. Ժամանակաշրջանում:

1. Բազմացման հողամաս

Տնկարանի այս մասում պատրաստվում ե տնկարանի հիմնական նյութը (արմատակալներ, վայրակներ), ինչպես մանրամասն կպարզաբանվի հետագայում, պաղատառ ծառերի մեծ մասն ստացվում ե վայրակների վրա պատվաստ կատարելու միջոցով: Խսկ վայրակները բազմացվում են գլխավորապես սերմերի միջացով և մասամբ վեղեատատիվ ձեռվա անդալիսի և կտրոնների միջոցով:

Այստեղից ել բազմացման հողամասոն ունենում ե սերմենային, անդալիսի լեկ կտրոնի բաժիններ:

Ցանքը և ծիլերի զարգացումն, անդալիսների ու կտրոնների միջոցով:

արժատակալումն ու զարգացումը պահանջում են, վոր հողում
բավականաչափ խոնավություն լինի: Դրա համար ել բազմաց-
ման հողամասի համար սովորաբար առանձնացնում են տնկարա-
նի ամենացածր և հարթ մասը:

2. Սերմնային բաժին

Այս բաժնում հարկ ե լինում գործ ունենալ նուրբ ծիլերք
և առևասարակ մանր բույսերի հետ, վորոնք կարող են հաջողու-
թյամբ աճել միմիայն լրիվ և վոչ ավելորդ խոնավության, հո-
րաւս լնկ լույ մշտկված հողի պայմաններում. սրան համապատառ-
խան պետք ե սերմնային բաժնի համար հողամաս ընտրել:

Բոլով գեղղերում ցանքը պետք ե կատարել հարթ տեղամ,
մարգերում կամ ակսոներում:

Սերմնային բաժնի հաջող աշխատանքի համար կարեոր և
նաև այն, վոր նրա համար առանձնացված հողամասը մոլախո-
տերից ազատ լինի, վորոնց դեմ առհասարակ տնկարանի բոլոր
բաժիններում պետք ե ամենահամառ պայմանը տարդի. հասկա-
նալի յե, վոր հողակտորի միակողմանի ոգտագործումը միայն
պաղատու ծառերի սերմերի ցանքի համար իսպառ անթույլատրելի
յե, վորովհետեւ հողը կղրկվի սննդարար նյութերից, մեծ չափե-
րով կվարակվի ֆասատուներով և պտղատու ծառերի հրվանդու-
թյունների սաղմերով: Դրա համար ել սերմնային բաժնում պետք
և ճիշտ ցանքացանցուրյան մտցնել. սովորաբար սերմնային և
ներքեռում նկարագրելիք կտրոնի բաժնում մշակվում են բանջա-
րանցային կուլտուրաները և ցանովի խոտերը, հատկապես թի-
թեռնածաղկավոր բույսերը:

3. Անդալիսի բաժին

Պտղատու ծառերի մի քանի տեսակները բուծելու գեղղում,
ինչպես արդեն ասված ե, անհրաժեշտ ե լինում դիմել անդալիսակ
բազմացման ձերն:

Այսպես են բազմացվում Դումենի, Ռայկայի և սերկերլի
պատվաստակալները, թղուկային և կիսաթղուկային խնձորենի
և առանձինի ստանալու համար:

Նույն ձեռվ են բազմացվում ընտանի կազնին, հաստպա-
շային թփերը և այլն:

Անդալիսի բաժինը ինչպես և սերմնային ու կտրոնացին բաժինները բավականաշափ խոնավություն և հարուստ ու վիշտուն եղան պահանջում:

Անդալիսի միջոցով բազմացվող տեսակների վերը բերված թգարկումից յերկում ե, զոր այս բաժինը վոչ ամեն պտղառու Տընկարանի անհրաժեշտ մասն է:

4. Զելավարման հողամաս

Պազատու տեսակների սերմերից աճած բույսերը այդի գցելու համար մեծ մասամբ պիտանի չեն: Սրանք լոկ վայրակներ են, զոր պիտի պատվաստել, կամ թե, ինչպես ասում են, աղնվացնել կուլտուրական սորտերով:

Պատվաստը կատարվում և տնկարանի ձևավորման հողամասում:

Այսուղ արդեն պազատու ծառերին տալիս են հետագա զարգացման, ապաև պատվարերման համար վորոշակի, հարմար ձեւ:

Դրա համար ել տնկարանի այս մասը կոչվում ենաև նեվագամանուն նողամաս:

Այսպիսով բազմացման հողամասը սպասարկում և տնկարանին:

Իր իսկ տնկարանում աճեցվող տնկիները պետք և ավելի մեծ հեռավորության վրա տնկված լինեն, քան թե բազմացման հողամասի վայրակները:

Սրանք այսուղ մնում են յերկու կամ հաճախ յերեք տարի: Դրա համար ել ձևավորման հողամասի տարածությունն իր չափերով մի քանի անդամ՝ գերադանցում և բազմացման հողամասին:

ԳՏՂԱՏՈՒ ՏՆԿԱՐԱՆԻ ՊԼԱՆԻ ԿԱԶՄԵԼԸ

Վերը նկարագրված բոլոր բաժինները պետք և պատվատու տնկարանի կազմակերպման համար ընտրած հողամասի վրա ավելի քան նպատակահարմար ձևով դասավորված լինեն, համաձայն նքանցից յուրաքանչյուրի գերի և պահանջների:

Յուրաքանչյուր բաժնի համար պետք և սահմանել հողամասերի չափն այն հաշվով, զոր բազմացման հողամասից ամեն տարի այնքան լավորակ վայրակներ բաց թողնվեն, վորքան ան-

հրաժեշտ և ձևավորման հերթական (առաջին) դաշտի տնկման համար:

Տնկարանի բոլոր մասերի լավագույն սպասարկման համար, անհրաժեշտ և նախորոք նշագծել՝ պաշտպանող բույսերի և ցանկապատերի տեղերը, գլխավոր և յերկրորդական ճանապարհների ու վոռոզող առուների դիրքը:

Դետք և նաև նշել սպասարկող կառուցումների—ընակելի շենքերի, գույքի, շինանյութերի, ջրարաշխական կառուցվածքների, հակավորման սրահների տեղն ու դասավորությունը:

Սրանք բոլորն ել պիտք և համապատասխանեն տնկարանի չափին և դասավորված լինեն նրա հողամասի վրա նպատակահարմար ձևով:

Այս կարեոր խնդիրը հնարավոր և միանգամայն բավարար լուծել այն դեպքում, յերբ հատկացված հողամասը նույորոք բազմակազմանի ուսումնասիրության յենթարկվի:

Այստեղ վոչ միայն պիտք են մասնագետների ցուցմունքները, այլև վողջ կուեկտիվի համերաշխ աշխատանքը:

ՏՆԿԱՐԱՆԻ ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՄՈՒՄԸ ՄԱՐԲԵՐ ԳԵՎՔԵՐՈՎ ՀԱՅԻ և լինում տարրեր ձևով կատարելու:

Յեթե տնկարանը հիմնվում է անմշակ հողամասներում՝ խռպան հողերում կամ մարզագետնային լավ հողի վրա, այս դեպքում նախապատրամումը կարող է սահմանափակվել միայն հողի ճիշտ մշակությամբ: Իսկ յերբ տնկարանի համար հատկացվում են հնուց մշակված հողեր, այս դեպքում խիստ սիծ նշանակություն ունեն նախորդող կուլտուրաները:

Լավ կազմություն ունեցող, շարքաների կուլտուրաների առակ յեղած և մոլախոտերից մաքուր ու հարուստ հողերը միայն տնկարանի կողմից պահանջվող վարի խորության կարիքն են զգութ: Իսկ յեթե այսպիսի հողամասի վրա մոլախոտերը, վատ ապրուելու հիշայի հետեանքով, վոչնչացված չեն, այս դեպքում պիտք են մասն հողամասը մի ամառ սե ցելի տակ առնել:

Յեթե հնարավոր է, ավելի լավ և տնկարանի համար նախապատրամակած հողամասն 2-3 տարի նախորոք զբաղեցնել խոտաբույսերով:


Առանձնապես ցանկալի յեւ տեղի կլիմայական և հողային պայմաններին համապատասխանող թիթեանածաղիկ բույսերի, որինակ՝ հարավում առվույտի, ավելի հյուսիսային շրջաններում յերեքնուկի և կորնգանի մշակությունը:

Յերբ տնկարան գցելու դործը շտապ և և սրտ հետևանքով բազմամյա խոտաբույսերի մշակությունը հնարավոր չե, պետք և դիմել միամյա թիթեանածաղկավոր խոտերի, կամ թե հացաւատիկա-թիթեանածաղկավորների խառնուրդների (որինակ, վեկը՝ զարսակի, վիկը քարու հետ) ցանքին, հերկելով այն վորպես կանաչ պարարտացում:

Այն զեպքում, յերբ մոլախոտերը խիստ զարգացած են և միամյա խոտաբույսերի ցանքի միջոցով անհնար և սրանց գեմ պայքարել, կանաչ պարարտացման հերկից հետո պետք և հողամասը մի տարի ես պահել սկ ցելի տակը:

Տնկարտնի համար անհրաժեշտ ե հողի խորը մշակություն. Պազատու տեսակների սերմերի ցանքի համար խորհուրդ և տրվում է երկել վոչ պակաս 20 մմ խորությամբ, իսկ ձևավորման հողամասում՝ վայրակների անկման համար՝ պետք և հերկել 20—25 մմ-ից վոչ պակաս խորությամբ:

Տնկարտնի հողամասի հերկը լավ և կատարել տրակտորով, կոմմ ձիու (Սակկի) գութանով:



Ֆլ. 1. Սակկի գութան

Հերկի ժամանակը տարբեր և և կախում ունի սերմերի ցանքի կամ թե վայրակների տնկիւու ժամկետներից:

Դարնան ցանքն անելու և վայրակները տնկելու համար, հողամասերն աշնանը անպայման պետք և հերկեր գարնանը կրկնահերկ կատարելու պայմանով:

Աշնանը տնկելու դեսպրում՝ հերկն ավելի լավ և կատարեց նախորդ՝ գաբնանը, կատ հակառակ պարագայում ամառվա կեսին:

Մարդագետնային հողերի, խոպանների կամ թե բազմամյա խոտերի տակ գտնված հողակտորների հմբերը կարտելու համար—բացի սովորական ձևով փոցինելուց—պահանջվում են նաև սկավոռակավոր փոցին գործածություն:

Վորպես կանոն, տնկարանը լավ պարարտացում են պահանջում: Աղքատ հողերում տնկինները խիստ դանդաղ են աճում, քանի վոր նրանք խիստ հյուծում են հողը, մինչդեռ հարուստ սետհողերը՝ տնկարանի գոյության առաջին տարում՝ իսպառ պարարտացման կարիք չեն գումար: Այլ բան են Միության միջին գոտու աղքատ հողերը: Այստեղ տնկարան կազմակերպելիս, աղբով պարարտացումն անհրաժեշտ է և այն ել մեծ չափով՝ հեկտարին 40 տոնն (80 սայլ) նույնիսկ ավելի: Թարմ աղբը տալիս չպետք և շատ խորը հերկեր քանի վոր այս գեպքում նա շատ դանդաղ և քայլքայգում:

Աղբի պակասության գեպքում կարելի յեն փոխարինել հանքային պարարտանյութերով: Ավելի լավ և գործադրել սուպերֆոսիֆատ, վորպես Փոսֆորաթթվային պարարտանյութ, քլորական կալիում—հողի կալիումի պահանջը բավարարելու և ծծմբաթթվային ամոնիակ—հողն աղոտով ապահովելու համար:

Պարարտանյութերի նշված տեսակները կարելի յեն խառնել իրար հետ և այդ գրությամբ մտցնել հողի մեջ, վորը և կենցացնի ու կեժանացնի աշխատանքը: Պարարտանյութերի միջին գույններն են մեկ հեկտարի համար սուլֆերֆոսիֆատ՝ 3—4 ցենտներ, քլորական կալիում՝ 2—3 ցենտներ, ամոնիում-սուլֆատ՝ 2,5—3 ցենտներ: Ցենթ հանքային պարարտանյութերը մտցվում են հողի մեջ աղբի հետ միասին, այս գեպքում՝ սրանց դոզանքում և համապատասխան չափով իջեցնել: որինակ՝ յեթե մտցվում և միայն աղբի կես դոզ (20 տոնն), այս գեպքում հանքային պարարտանյութերի դոզան ևս կիսով չափ պետք է պակասուցնել:

Ծանր և սառը հողերը կարելի յեն լավացնել մտցնելով սրանց մեջ կիր, հեկտարին 2—3 տոննի չափ:

Սակայն կիրը հողի մեջ մտցնելը մեծ զգուշություն են պահանջում, քանի վոր վորոշ դեպքերում կարող են վնասակար աղբեցությունն զործել: Դրա համար հողի կրացումը պիտի են կա-

տարել միայն մասնագետների ցուցմունքներով, ձեռքի տակ ունենալով հողի հետազոտության տվյալները:

Ի՞նչ է ԲՈՒՑՍԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ

1. Ընդհանուր հասկացողություն պատվասի մասին

Այդիներում պատղատու ծառերն ուշադիր դիտելիս՝ կարելի յեն նկատել, վոր ցողունների հրամքի վրա, հենց գետնի մակերեսին մոտ, նկատվում և սեղմկած գոտի: Սա պատղատու ծառի յերեկու մասի սահմանն է:

Վերոհիշյալ գոտուց դաճը ցողունի մասն ու արժատները պատկանում են վայրի ծառին, իսկ վերին մասը, վորը պատվաստված և նըռ վրա, «կուլտուրական» սորտին: Սակայն հաղովագոյւռ դեպքում և լինում, վոր նրանց ընդլայնական աճը լինի միենույն ուժի, վորի հետևանքով և ցողունի վրա առաջանում և նշված նըռբանը:

Գոտին վայրի սերմաբույսի այն մասն և, վորի վրա կատարվել և կուլտուրական սորտի պատվաստը:

Բանն այն է, վոր խնձորենու, տանձենու, կամ թե պատղատու այլ տեսակի կուլտուրական վորեւ սորտի սերմերից անմիջականորեն աճած պատղատու ծառերը մեծ մասամբ չնշին չափով են նմանում այն ծառերին, վորոնց պատուղներից վերցված են այդ սերմերը: Սերմաբույսերի մեջ լավորակ պտուղ տվող ծառերը սովորաբար այնքան քիչ են, վոր սրանց սերմերը սովորական ցանքի միջոցով չեն բազմանում, բացառությամբ շատ քիչ դեպքերի: Որինակ, վերջիններիս թվին են պատկանում դեղնաբների, ընկուղենիների վորոց սորտերը:

Տնկարանի ձեռվորման հողագույն սերմաբույսերի վրա պատվաստում -աճեցնում են կուլտուրական այս կամ սորտի բողբոջը (աչք), կամ յերիտասարդ ճյուղի կտրոնը:

Կուլտուրական սորտի պատվաստած մասը կպչելով սերմաբույսին շիվ և տալիս, վորը աստիճանաբար աճելով հետազում ավյալ սորտի ծառ և դառնում:

Սերմաբույսը, վորի վրա պատվաստում են կուլտուրական սորտը, կոչվում և վայրակ կամ պատվաստակալ, իսկ սրա վրա առաջ կուլտուրական մասը - պատվաստացու:

2. Պատմու նիմնական տեստելների կարեվորույն
պատվասակալները

Պատղատու կուլտուրական ծառերի դարձացութիւն տասկելա-
գույն չափերով կախված եւ այս պատվաստակալներից, վորոնց
վրա սրանք պատվաստված են:

Ամենից առաջ պետք եւ հիշել, վոր վորոշ պատվաստակալ-
ների վրա զարգանում են խոշոր, յերկարակյաց, բայց համեմա-
տաբար ուշ պատղաբերող ծառեր:

Ըսդհակասակն, այս նույն տեսակներն ու սորտերը—պատ-
վաստվելով այս պատվաստակալների վրա, փրբահասակ են լի-
նում, յերկարակյաց չեն լինում, բայց և այնպես վաղ են պաղա-
բերում:

Առաջին պատվաստակալները կոչվում են ուժեղ աճող, իսկ
յերկարորդները՝ թույլ աճող, կամ թղուկային:

ԽՆՉՈՒՅԵՆՈՒԻ ՊԱՏՎԱՍՏԱԿԱԼՆԵՐԸ

1. Այս պատվաստակալներից իրենց նշանակությամբ և
տարածվածությամբ առաջին տեղը բանում են անտառային վայրի
խնձորենիները, վորոնց կարելի յեւ հանդիպել Միւթյան շատ
վայրերում, մասնավորապես Հայաստանի Արքաններից՝ Դիլիջանի,
Իջևանի, Կիրովականի անտառներում:

Այս պատվաստակալի արժանիքներն են.

ա) դեպի հողը պահանջկոտ Արև:

բ) պատվաստացվի միացման տեղում համարյա բոլոր փո-
փոխակների հետ լավ համանելը.

գ) վայրի խնձորենու վրա պատվաստած ծառնը շատ խո-
շոր, յերկարակյաց և բերքատու յեւ լինում:

2. Հարավի շրջանների համար ամենալավ պատվաստակալը
հանդիսանում է «Կիրայիս»-ն: Վերջինս ունի ուժեղ զարգացած,
փնջած արմատային սիստեմ, վորը հողին հանրավորությունն և
տալիս ջրի պակասին հաջողությամբ դիմանալ:

Միաժամանակ այս պատվաստակը լը չի տուժում նաև ավե-
լորդ խոնավությունից: Պատվաստակալի մյուս արժեքավոր հատ-
կությունը, նրա մեծ ցրտադիմացկունությունն եւ:

3. Հյուսիսային պատղաբօւծական շրջանների համար խնձո-

բնու արժեքավոր պատվաստակալ և համարվում «Սիրիուս»-ն, վորն ունի լավ զարգացած, գլխավորապես հողի վերին շերտերում առածվող արմատային սիստեմ։ Մրա համար ել սաղր հողերում նա իրեն վատ չի դգում, չի տուժում ավելորդ խոնավությունից և ստորերկրյա ջրերի բարձր սակերիսից։

Սակայն «Սիրիուս»-ն ունի և բացասական կողմեր. յերաշտի չի դիմանում և հաջող չի համաճում մի քանի կուլտուրական փոփ-խակների հետ։

Նկարագրված բոլոր պատվաստակալները բազմանում են սերմերով։

4. Հարավի պտղաբուծական ջրջաններում կիսաթղուկային խնձորենիներ աճեցնելու համար ողավում են «Դուսեն»-ից։ Հյուսիսային շրջանների համար «Դուսեն»-ը սառնամանիքներին չդիմանալու պատճառով պիտանի չե։

Դեպի խոնավությունը նա պահանջկոտ չե, սակայն բերքի հազի կարիք և զգում։ Պատվաստացվի հետ լավ և համաճում։

«Դուսեն»-ի վրա պատվաստած խնձորենիները միջին մեծության են համանում և շատ յերկար չեն տպրում—միջին չափով 20—30 տարի, բայց շուտ են պտղաբերում։

5. «Մայկա»-ն վորպես պատվաստակալ գործ և ածվում միայն հարավային շրջաններում, վորի վրա զարդանում են յերրորդ-շորրորդ տարում պտղաբերող, բայց վոչ յերկարակյաց (15—20 տարի), իսկական թղուկային ծառեր։ «Մայկա»-ին պետք և հարուստ և բավական խոնագ հող։

«Մայկա»-ի պատվաստը հաջող և կպչում և, անկախ փոփախակից, լավ և աճում։ Թե «Դուսեն»-ը և թե «Մայկա»-ն բազմացնում են անդախի միջոցով։

ՏԱՆՁԵՆՈՒ ՊԱՏՎԱՍՏՈՒԿԱԼՆԵՐ

Տանձենու համար յերկու հիմնական պատվաստակալ և գործադրվում, ա) անտառային վայրի տանձենի, սովորական ուժեղ տճող տանձենու ծառեր սառնալու համար և բ) սերկելինիթղուկայինների համար։

1. Վայրի տանձենին, անտառային վայրի խնձորենու պես, լայն չափերով տարածված և Միության և մասնավորապես չափատանի անտառներում։

Վայրի տանձենին ունենում ե ուժեղ, դեպի հողի խորքը
տարածվող արմատներ, վորը և նրան դարձնում ե սակավապա-
հանջ՝ հողի խոնավության ու սննդաբար նյութերի նկատմամբ։
Պատվաստը բոլոր փոփոխկների դեպքում ել լավ ե կաջում։
Վայրի տանձենու վրա աճող ծառերն աչքի յեն ընկնում իրենց
ուժեղ աճեցողությամբ և յերկարակեցությամբ։ Վայրի տանձենին
բազմանում ե միայն սերմերով։

2. Սերվելինու վրա պատվաստած տանձենիներն արդեն
յերբորդ տարուց սկսում են առատ պաղաքերել, բայց 20 տարուց
ավելի չեն ապրում։

Սերկելինին շատ պահանջկոտ և թե դեպի կիման և թե
դեպի հողը։ Սառնամանիքներին նա չի գիմանում, որա համար
ել մշակվում և հարավում։ Նա տանձենու թղուկային կուլտու-
րայի համար միանդամայն անփոխարինելի յէ վորպես պատվաս-
տակար։ Սերկելինուն հարկավոր և տաք, հարուստ և բավակա-
նաչափ խոնավ հող։

Սերկելինու, վորպես պատվաստակարի, բացասական կողմն
այն ե, վոր նրա հետ վոչ բոլոր կուլտուրական փոփոխակներն
են լավ համանում։

Սակայն պաղաքության ասպարեզում այս բացը վերաց-
նելու համար վաղուց արդեն լավ միջոց և մշակված, այսպես
կոչված կրկնակի պատվաստը։

Ակզրում սերկելինու վրա պատվաստում են այն կուլտու-
րական փոփոխակը, վորը նրա հետ հաջող և համանում, իսկ նո-
տո արդեն վերջինիս վրա պատվաստում են ցանկալի փոփոխակը,
վորն առանց այդ միջնորդի չեր համանի։

Միջանկյալ պատվաստի համար լավագույն ժամանակակի և
«Ելուրե»-ն կամ «Պատորսկայա»-ն։

Հյուսիսի և ավելի վեր շրջանների համար լավ են նույն-
պես «Ելինկա», «Ելմոննայա» («Ելմոնկա»), «Ամառնայա»
(«Սախարկա») փոփոխակները։

Հոչակագոր պաղաքուծ ի. Վ. Միջուրինը վերջին տարինե-
րում կարողացավ ստանալ սերկելինու «Ելուսիսային» սոբայ-
վորը հաջողությամբ դիմանում և սառնամանիքներին։

Այս նոր սերկելինին հնարավորություն ե աալիս թղու-
կոյին տանձենիների կուլտուրան դեպի հյուսիս տարածելու։

Սերկելինին սովորաբար բազմացվում ե վեգետատիվ ձա-
նապահով—անդախով և կտրոններով, քանի վոր սերմային
բաղմացումը չի ապահովում սերմաբույսերի միակերպությունը։

ՍԱԼՈՐԵՆՈՒՈՒ ՊԱՏՎԱՍՏԱԿԱԼՆԵՐԸ

Սալորենու համար պաղաբուծներն իրենց տրամադրության առաջ պատվաստակալների բազմապիսի տեսակներ ունեն: Այս մեջ մենք կանգ կառնենք միայն ամենագլխավորների և շատ աաբածվածների վրա:

1. Սալորենին կարելի յէ պատվաստել սալորենու կուլտուրական սորտերի ոերթաբույսի վրա, նրա համար տեղական դիմացկուն սորտերը ընտրելով:

2. Մեզ մոտ՝ հարավում, լայն չափերով ոգտագործվում ե մանրապտուզ, վայրի սալորենուն մոտ տեսակը — ալուչան: Սա աեղի պայմաններին հեշտությամբ հարմաքվող զարդացած արմատային սիստեմ ունի:

Ընդհանրապես ալուչան բավական խոնավ և բերրի աեղերում ե աճում, ուր հողի վերին զերտում բազմաթիվ արմատներ ե առլիս, սակայն նա լավ ե աճում նաև աղքատ և վոչ բավարար խոնավությամբ հողերում: այս դեպքում զարգացնելով հողի մեջ խորը զնացող և ճյուղավորվող արմատներ, գործնք և աղաճովում են ծառը թե բավարար խոնավությամբ և թե սննդաբար նյութերով:

Ալուչան սառնամանիքների նկատմամբ դիմացկուն ե, վորը և հնարավորություն ե տալիս մշտկելու հյուսիսային շրջաններում: Ալուչան պատվաստակալի հետ լավ ե համաճում: Ալուչայի վրա աճում են խոշոր և յերկարակյաց ծառեր, սակայն պետք ե իմանալ և հիշել վոր ալուչայի վրա պատվաստած սալորենու ծառերի տնօւշադիր խնամքի և հատկապես արմատային ծիլերի զեմ պայքարի բացակայության դեպքում վերջիններս կարող են այնքան արագ և ուժեղ աճել, վոր կհաղթահարեն հիթական բույսին:

Անհրաժեշտ ե ասել, վոր հարավի մի շարք աեղերում, հատկապես սալորենու զարդացման լավագույն շրջաններում — ալուչան հրաշալի պատվաստակալ և հանդիսանում վոչ միայն սալորենու, այլ և մյուս կորիզավոր տեսակների — դեղձենու, ծիրանու համար:

Ալուչան բազմանում ե կորիզների միջացով:

3. Մամուխը մշակվում ե խսկական թզուկային սալորենիներ սառնուու համար: Մամուխի, վորպես պատվաստակալի, մեծ ուսագելությունն այն ե, վոր նա համարյա միատեսակ ե աճում

թե բերբի և թե ազգատ, թե բավական խոնավ և թե զգալի չափով չոր հողերում:

Մամուլի գրա պատվաստած բոլոր թզուկային ծառերը վազ են պաղաքերում, բայց յերկարակյաց չեն Բազմանում են մեծ մասամբ կորիզներով:

Մացառուտներից ստացված պատվաստակալները վատ են, քանի զոր հետագայում առատ մացաներ են արձակում:

4. Նիրանին ևս գործադրվում ե յերկարակյաց և ուժեղ աճող սալորենիներ ստանալու համար:

Սուկայն ծիրանին՝ վորպես սալորենու պատվաստակալ, քիչ և գործածվում: Սա սալորենու պատվաստացվի հետ վատ և աճում և անդամ ծառի հասուն վիճակում ուժեղ քամիներից կուրպում և պատվաստի տեղից:

Դրա համար ել ծիրանուն միայն բացառիկ դեղքերում պետք և սգտագործել վորպես պատվաստակալ: Դեղձենին ու նշենին ևս գործադրում են վորպես սալորենու պատվաստակալ: Դեղձենին նպաստում և սալորենու արագ աճելուն և վազ պաղաքեցնելուն:

ՀԵՌԱԾԵՆՈՒ ՊԱՏՎԱՍՏԱԿԱԼՆԵՐԸ

Կեռասենու կարեռ պատվաստակալը վայրի կեռասենին և, վորից կան դեղին և կարմիր պտուղներ ունեցող ձեր:

Պատվաստակալի զարգացման համար լավ և ընտրել դեղձնողուուղ կեռասենու կորիզները: Սրանց վրա պատվաստած կեռասենու պատվաստացուն ուժեղ, յերկարակյաց և, թեև մյուսների համեմտառությամբ ուշ և պաղաքերում:

Կեռասենու պատվաստակալը պահանջում է պարարտ, փխրուն, սաք և բագականաչափ խոնավ հողեր: Պատվաստը բոլոր սորտերի հետ շատ հաջող և կպչում: Վայրի կեռասենու կորիզներ չինելու դեղքում կարելի յե բավարարվել նաև տեղական կուլտուրական սորտերի սերմերույսերով:

«Անտիպիտ»-ն (այլ կերպ «Մազալեպիտ» կամ Մահալերի բալ) նույնպես լայն չափերով մշակվում և հարավի Չըջաններում գոչ միայն կեռասենու, այլև բալենու համար, վորը նույնպես նրա հետ հաջող կպչում և աճում ե:

«Անտիպիտ»-ի մյուս տռավելություններն են գեղի հողն

ու խօնավությունն ունեցած սակաի պահանջկոտությունը և մացառների համարյա լրիդ բացակայությունը, Բաղմանում և կոչը բիզների միջոցով:

ԲԱԼԵՆՈՒ ՊԱՏՎԱՍՏԱԿԱՂՆԵՐԸ

1. Միջին և հյուսիսային շրջաններում բալենու հիմնական պատվաստականն ինքը՝ բալենին և, վորը պարզանում և տեղի կուլտուրական սորտերի կարիզներով: Բոլոր սորտերը հրաշալի յեն կպչում: Այս պատվաստակալը պահանջում չեղագիր և սահմանափակում է գեղագիր գեղագիր և սահմանափակում է գեղագիր գեղագիր:

2. Հարավի շրջանում բալենին պատվաստում են նաև «Անտիպկուսի» վրա:

Դիղձենի. — Դիղձենու լավագույն պատվաստակալը հնաց ինքը դիղձենին և, վորի վրա պատվաստած ծառերը համեմատարար վաղ են պատվարերում և առատ բերք են տալիս: Լավ և զարգանում խորը, թեթև, գլխավորապես կավա-ավաղային և կրախան հողերում:

Չոր, ավազոտ հողերում վորպես դիղձենու պատվաստակալ կարելի յեղործադրել վայրի ծիրանին: Այս պատվաստակալը վրա պատվաստված բույսերն ավելի ուժեղ են աճում և յերկարակյաց են լինում:

Չոր և գոռոզման ջրով աղքատ հողերում, վորպես ուժեղ աճող և ցրտադիմացկուն պատվաստակալ կարելի յեղործադրել նշենին:

Ծիրանի. — Ծիրանու համար ընդունված և լավագույն պատվաստակալ են վայրի ծիրանին («իսարջիւն»), վորը կուլտուրական ծիրանու լավ աճող և յերկարակյաց ծառեր և տալիս, ունի ուժեղ ճյուղավորվող, վերին շերտերում տարածվող արմատային սիստեմ և դեպի հողի խորքը գնացող առանձին արմատներ:

Լավ զարգանում են խորը, կավային, քարքարոտ և կրային հողերում:

Ծիրանու պատվաստակալը հողի ահրացիայի հանդեպ պահանջուած են, վորի հետևանքով համար կավային հողերում վատ և զգում իրեն: Խապառ տանել չի կարողանում հահճացած և նույնիսկ թեթև լճացած հողերը:

Ծիրանու պատվաստակալը յերազարդիմացկուն և և բավա-

կանանում և հողի մեջ դանվող սակավ սննդանյութերով և հաշտ-
վում և նույնարձութեալ թեթև աղուտ հոգերի հետ Բազմանում և կո-
րիզներով: Վորպես ծիրանու պատվաստակալ գործազրում են
նոր դեղձենին, նշենին և ալուչան:

3. Պատվասի նումար վորտեղից կտրնեներ վերցնել

Մայր այգի: — Պաղպատու ծառերի ցանկացած տեսակների բազ-
մացման համար պատվաստ կատարելիս պետք և մատաղ շիվեր
ունենալ: Այդպիսի շիվերը կոչվում են պատվաստաշիվեր կամ
պատվաստի կտրոններ: Կտրոններ պատրաստելիս պետք և կտ-
րականի նույնականութեալ լինել, զոր զրանք կտրված են հենց այն
ծառի տեսակից, վար ցանկանում են բազմացնել: Այսպիսով բազ-
մացվող տեսակների կտրոններ մատակարարելու համար տնկա-
րանը պետք և մշտական և նուսալի ազրյուք ունենա: Այս իննդիքը
լավագույն ձևով և լուծվում այն դեպքում, յերբ կան բավարար
չափի և կտղմի պատվատու տնկվածքներ Դրա համար տնկարանին
կից պետք և ունենալ մայր արգի, կազմված զիլավորապես այն
տեսակներից ու սորտերից, զորոնք տվյալ շրջանի համար ճա-
նաչված են վորպես լավագույն տեսակներ և մտնում են այդ
շրջանի ասորտիմենտի մեջ: Իսկ այդ տեսակների թիվը իսկատ
ունանակիութեալ է: Սակայն ցանկալի յե մայր այդում ունենալ
նաև վորոշ (թեկուզ սահմանափակ թվուն նմուշներ) քանակի սոր-
տեր, զորոնք տվյալ շրջանի ասորտիմենտի մեջ չեն մտնում և
մշտական լոկ փառձի յել ուսումնափուրյան նպատակով:

Մայր այգու բոլոր ծառերի վոր սորտին պատկանելը պիտի
խստորին սուսպիքի և անունը փակցվի ծառին: Բացի այդ, յուրա-
քանչյուր ծառ պետք և նշված լինի հատակագծի վրա, վորի
իսկականը պահպում և վորպես կարեռ փաստաթուղթ: Ամենորյա
ազխատանքների և տեղեկանքների համար պետք և ոգտվել այդ
հատակագծի պատճենից: Մայր այգու առկայությունը տնկարանն
աղանդովում և անհրաժեշտ քանակի թարմ կտրոններով, իսկ այդ
հանդամանքը պատվաստի հաջողության համար բացարիկ կա-
րենություն ունի:

Մայր այգու բացակայության գեպքում տնկարանը կարող
և ոգտվել ուրիշ այգիներից վերցրած կտրոններից, կամ տնկա-
րանի յերկամյա տնկիների այն ավելորդ շիվերից, զորոնք ամա-
ռու, ձեալորման ժամանակ, կտրվելու և հեռացվելու յեն, սակայն

միայն այն պայմանով, վոր լիտպես համոզված լինենք, վոր նրանց սօրտի ճշգրիտ վորոշման մեջ սխալներ չկան: Անհրաժեշտ և նույն ձեռք առնել բոլոր միջոցները, վոր կտրոնները հավաքելու ու փոխադրության և առաջման ժամանակ իրար չխռանվեն: Տարբեր սորտերի կտրոնները պիտի կտպել առանձին և նրանց վրա ճիշտ գրված անուններ կախել:

Ապա պետք և ամենալրարջ ուշադրություն դարձնել այն ժամաների ընտրության վրա, վորոնցից կտրոններ են վերցվելու: Վերջիններս պետք և բերքատու, ուժեղ և մասսատուններից ու ճիշտանդություններից զերծ լինեն:

Գերջապես մթերման բոլոր դեպքերում և գործադրման ժամանակ կտրոններն ամեն կերպ պետք և պահպանել չըրանալութ, վորի մասին մանրամասն կշարադրվի ներքեւում:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԲՈՂՄԱՅՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒԻՄ

1. Պատվաստակալներ ստանալու նաևար վորտեղից սերմեր վերցնել

Պատվաստակալներ աճեցնելու համար պետք և սերմերն ու կորիզները, վորպես ընդհանուր կանոն, վերցնել տվյալ որևէնի ծառերից:

Այդ սերմերի ստացումը դրսից պետք և կարդավորել միայն այն դեպքում, յերբ տեղական նման աղբյուրներ չկան, սակայն միայն այնպիսի շրջաններից, վորոնք կլիմայական և հողային պայմաններով համապատասխանում են տվյալ շրջանին:

Գետք չե պատահական սերմանյութ գնել առանց նրա ծագումը խստորեն ստուգելու: Լավ կլինի, վոր տնկարանն ինքը կարգավորի յուր սերմի մթերումը: Դրա համար պետք և վաղոքոք, մինչեւ պտուղների հասունանալը, խնամքով ուսումնասիրել սերմեր մթերելու յենթադրվող վայրերը: Այս դեպքում ուստակար և զու միայն մանրամասներն սահմանել սերմի մթերման կետերը, այլև նշել ոգտագործվելիք առանձին ծառերը, ընարելով նրանցից միայն ամենաառղջներն ու առաջ պտղաբերողները: Լավ կլինի վոր այս աշխատանքը կատարվի անմիջականորեն մասնագետի կամ տնկարանի ղեկավարի միջոցով: Սերմերն ու կորիզները պիտի վերցնել ամենահասուն պտուղներից:

Կուլտուրական տեսակների սերմերից պատվաստակալ ունենալու համար անհրաժեշտ և վորպես սերմ տվյալ ծառեր ընտրել առողջ, յերկարակյաց ու առաջ պտղաբերող նմուշները:

2. Պառադիքից ինչպես հանել սերմերը

Հավաքած պտուղներից պետք է սերմերը հանել: Պառակ-
ներից սերմեր հանելու յերկու յեղանակ կա՝ բաց ու չոր:

Մինչև վերջին ժամանակները գործնականում համարյա-
բացառապես ողտագործում եյին թաց յեղանակը: Վերջինիս եյու-
թյունը հետեւյալն ե:

Արինակ, մինչև 70 սանտիմետր բարձրությամբ խնձորի կած
աանձի կույս և արփում, գորպեսզի պտուղները թացանան և
նույնիսկ, զորքան կարելի, յե լավ նեխնեն: Այդ գեպքում չպիտի
թողնել, զոր պտուղներն ուժեղ տաքանան, զորը կարող է փշացնել
սերմերը: Յեթենկամ վի տաքացում, պիտի շատապ սառեցնել պտուղ-
ները: դրա համար ել անհրաժեշտ և բարակ շերտով փռել և ժա-
մանակ առ ժամանակ խռոնել:

Պազի մեջ սերմը լիակատար հասունալուց հետո հարկա-
վոր և անմիջապես դիմել սերմի զատման գործին: Հարկավոր և
նոխ պտուղը պտղահատով լավ ջարդել ապա ջարդված ամբողջ
մասսան լցնել լայն տաշտակների վրա զրված՝ պաղի սերմի
մեծությունն ունեցող թիթեղյա ցանցերի վրա: Ջարդված մաս-
սան պետք և ցանցի վրա ջրով լվալ ու տրորել, զորի հետե-
վանքով առանձնացած սերմերը ցանցի ծակոտիներից կթափվեն
տաշտի մեջ, իսկ չեչը կմնա ցանցի վրա: Նրանից հետո սերմը
տաշտից հանում, նորից մաքրում լվանում ու սովորում լավ շո-
րացնում են և մազելուց հետո պահում են չոր պահեստներում
մինչև ցոնքը կամ ստրատիֆիկացիայի յենթարկելը: Սերմն այս
ձևով զատելու դեպքում՝ շնորհիվ աշխատանքի մեքենայացման,
դործն արագ և ընթանում և ստացվում ե համեմատարար բարձ-
րորակ սերմ: Պաղանատ չունենալու դեպքում՝ պտուղը կարելի յե
ջարդել փայտյա թակերով, իսկ լվացումն ու մաքրումը վերը
նկարագրած յեղանակով:

Չոր ձևով զատումն ավելի լավ է: Այս յեղանակով՝ սերմը
հանելու համար պտուղներն անց են կացնում պտղահատի միջով: Ստացած
ջարդվածքը հյութից զատելու համար մամլում են:
Մամլած զանդվածը չորացնում են, այդ դեպքում հարկավոր և
ուշողիք հետեւյ, զոր բորբոս չտառջանա: Իսկ դրա համար ան-
հրաժեշտ և զանդվածը փռել բարակ շերտով, լավ ուկափոխվող տե-
ղում և հաճախ խռոնել:

Յերբ զանդվածը բավականին կչորանա, պիտի սկսել սերմի

մասին մասից զատելու աշխատանքը, վար կատարում են հատուկ մաղերով:

Տնտեսության մեջ կարելի յե այս կերպ վարվել:

Մանը սերմեր չանցկացնող ծակոտիներ ունեցող մեծ մաղը կողքերից յերեք-չորս թել անելով կախում են օրահի շեղ գերա-
ռից կամ ուղղակի ծառի կոճղից, գետնից մեկ մետր բարձրու-
թյամբ այնպես, վոր աշխատողի ձեռքը հասնի: Մաղը ցածրակող
պիտի լինի: Մաղն ուժգին շարժման մեջ են դնում, վոր սերմերը
նրա մեջ լավ թափահարվեն: Այդ դեպքում՝ ծանր սերմերը հա-
վաքվում են մազի տակ և նրա մեջտեղում, իսկ ամեն մանրուք,
կեղտ, պաղի չոր ու թեթև միսը հավաքվում և վերը, վորը հա-
վաքում և թափում են:

Այս յեղանակով ստացված սերմերի վորակն ավելի քան լավ
է: Բացի այդ, մամած հյութը կարաղ ե գործադրվել այս կամ այն
պազային խմիչքները պատրաստելու համար իմբի ողի, պտղի
կվաս և այլն), իսկ պտուղների չոր մսից կարելի յե պատրաս-
տել պտղի սուրճ:

Սակայն ավելի լավ և պտուղներից սերմերը հանել մրգի
մշակման գործարաններում: Այս դեպքում պետք ե նկատի տո-
ներ վոր գոյություն ունի մշակման յերկու յեղանակ. տաք, վորը
կապված և յեփելու կամ խաչելու հետ և պաղ (որինակ՝ պտղի
հյութ, ջրեր և այլն պատրաստելու դեպքում): Ցանելու համար
կարելի յե գործադրել այն սերմերն ու կորիզները, վորոնք ստաց-
ված են պտղի պաղ յեղանակով վերամշակութից, վորովհետև տաք
ձեռվ պատված սերմերը կորցնում են իրենց ծլունակությունը:

3. Լուվագույն սերմանյուրի բնիւրարյունն ու պամպանումը

Լավ սերմանյութի ու տնկանյութի նշանակությունը պարզ
է ամենքին, զրա համար ել այսուղ ցույց կտրվի միայն ընտրու-
թյան տեխնիկան:

Ինչպես արդեն վերն ասվեց, սերմերի ընտրությունն սկսվում
է զեռ անտառից (կամ այգուց), հողակտորներ, առանձին ծառեր,
պատուղներ և այլն ընտրելիս: Ընտրությունը, ինչպես անսանք,
շարունակվում է և պտուղներից սերմեր հանելու գործողության
ընթացքում: Սակայն այդ բոլորը չեն կարող հետացնել սերմերի
ընդհանուր մթերման մեջ անհամապատասխան սերմերը ընկնելու
համարավորությունը: Անմիջականորեն ցանվող սերմերի համար

բատ հնարավորին, սերմերի ավելի խնամքով և լրացուցիչ ընտ-
րություն պիտի կատարեն:

Նախևառաջ պետք է սերմը քամհարել, հեռացնել նրանից
բոլոր տեսակի կեղտերը և վախտ սերմերը: Աղա անհրաժեշտ ե
պարզել սերմի ծլունակությունը: Դաշտային և բանջարոնսցային
սերմերի ծլունակությունը վորոշվում է աճեցման յեղանակով:
Սակայն պատաստու տեսակների սերմերի նկատմամբ այդ յեղա-
նակն իսպառ կիրտակի չե, քանի վոր նրանց ծլելը խիստ յեր-
կարածվում է: Մնում և արտաքին նշաններով և առանձին
ձևերով վորոշել նրանց լավորակ լինելու: Այդ սերմերի ծլունակու-
թյունը կարծ ժամանակագիծում կարող և ստուգել հանրապե-
տական սերմնաբուժական կոնտրոլ կայանը տարբեր ներկանյու-
թերի միջացով:

Լավ սերմերն ավելի մեծ են, լիքը, ծանր, ունենում են
փայլուն մաշկ: Անփայլ գույնը ցույց ե տալիս, վոր սերմի վո-
րակը ցածր է, վորն առաջանում է հաճախ վատ մշակումից (թաց
ձի) կամ վատ ու յերկար պահելուց:

Սերմերը պիտի ունենան պարզ արտահայտված, տեսակին
հասուլ գույն: որինակ, խնձորի սերմերը—բաց-շագանակագույն,
իսկ տանձինը համարյա սև են: Սաշկի սպիտակավուն և ընդ-
հանրապես բաց գույնը սովորաբար ցույց ե տալիս, վոր սերմը
բավականաչափ հասունացած չե: Յերբեմն պատահում են անտա-
ռային տանձերի այլատեսակներ, բավականաչափ բաց գույնի
սերմերով, ուկայն միանգամայն հասուն: Պետք է նախապես
վարողիլ. թե այս կամ այն տեսակի հասած սերմերն ինչ գույն են
ունենում: Աղա պետք է հետազոտել նաև սերմի ներքին վիճակը:
Լավ սերմերը կոտրելիս ներքուստ ունենում են զուտ սպիտակ
գույն, իսկ վատ և հսացած սերմերը դեղնավուն: Թարմ և ընդ-
հանրապես առողջ սերմերն ունենում են զուրեկան համ, ընդհա-
կառակը, նեխածի համն ու հոտը ցույց են տալիս, վոր սերմը փշտ-
ցած է: Բորբոսը նույնպես սերմի անորակ լինելու ակնհայտ
նշան է: Սերմի պիտանելությունը վարողելու գործում մի շաբթ
պարզ փորձեր բավական ոժանդակում են:

1. Վորեւել պինդ բանով լավ սերմին խփելը միայն տափա-
կեցնում է այն, իսկ վատ սերմին՝ փշրում:

2. Լավ սերմերը սուզվում են ջրի տակ, իսկ վատարկներն ու
փշացածները բարձրանում են ջրի յերեսը: Այս զեղքում ամեն-
աժանընը, լավերը սուզվում են ջրի տակ: Դրանով ել վորա-

կյալ սերմերը զատում են վատերից: Սակայն ջրի սգնությամբ սերմեր ընտրելու դեպքում ծայրահեղ զգուշություն և պետք այ) աշխատանքն արագ կատարել, վորպեսդի սերմերը շատ շխանավանան, բ) վորքան կարելի յե արագ կատարել ջրից հանած սերմի լիովատար չորացումը: Դրա համար սերմերը պիտի փակչ չըր, լավ ողափոխվող շենքում՝ բարակ շերտով և հաճախ խառնել:

Սերմերը պիտի պահել չոր, հով շենքում, պարկերի մեջ: Յեթե անհրաժեշտ միջոցներ ձեռք շառնվեն, մկները սերմի պահանաներում խիստ ավելածություն կդորձնեն,

Ավելի լավ և պարկերը յերկաթալարերով կախել առաստաղից կամ պատերից: Կարելի յե սերմերով լի պարկերը դարսեց այնպիսի սեղանների վրա, վորոնց վոտքերին խփված են բարեկան լայն, անցքը դեպի ցած թիթեղյա հովանոցներ: Վերջապես, սերմերը լավ կարելի յե պահել թիթեղապատ արկղներում, վորոնք դրսից յերկաթով են պատած և բաղմաթիվ մանր ծակոտիներ ունեն՝ ոդ անցնելու համար:

Պարկերի վրա քիմիական մատիտով պետք և դրված լինի տեսակը, սորտը, սերմի պատրաստման ժամանակին ու տեղը: Նման նմուշներ պետք և տեղավորել նաև պարկերի մեջ (փայտն ետիկետների վրա): Այս կրկնակի նշաններն արվում են նրա համար, վորպեսդի կանխվի տմեն տեսակ խանաշվութություն այս կարենը դործում:

4. Սերմերի նախապատրաստմբ ցանքի նամար

Պաղատու տեսակների սերմերի ցանքը կարելի և կատարել թե աշնանը և թե գարնանը: Ազնան ցանքը գարնան ցանքի հանդեպ մի շաբաթ առավելություններ ունի:

1. Սերմերը չպիտի պահել ձմռան ընթացքում, վոր բավականին դժվար ե. 2. գարնանն այդեկործական շրջաններում շտապ կատարելիք բազմաթիվ աշխատանքներ են լինում, վորոնք առանց գործին զնասելու կարելի յե կատարել այն դեպքում, յերբ ցանքն աշնանն և կատարվում: 3. լավ և ապահովում գարնան ավելի գաղ ու ավելի միահամուռ ծլումը, իսկ գարնանային ծիլերը սովորաբար միահամուռ չեն լինում, շատ անգամ դուրս են գալիս և ջորդ տարում: այդ դեպքում ել, այնոււասնեայնիվ, հարկ և լինում կատարել ցանքի սովորական աշխատանքները՝ Փիլեցում,

քաղցան, իսկ հողի խոնավության պակասության պարագային նաև վռառում:

Աշխանացանի վատ կողմ այն ե, վոր ցանքերը յերբեմ տուժում են մկներից:

Սակայն յերբեմն հարկադրված են լինում դարնանացանք չիմել, յերբ սերմերն ուշ, արդեն քրաերն սկսվելուց հետո յեն ստացված լինում: Ընդհանրապես անհրաժեշտ ե կորիզավորներն աշնանը ցանել: Կորիզավորները պետք ե ցանել պտղից հանելուց անմիջապես հետո:

Պտղատու ծառերի սերմերը դարնանը ցանելու համար յենթարկում են ստրատիֆիկացիայի, այսինքն՝ ավաղի մեջ են պահում: Պտղատու տեսակների սերմերի նախապատրաստման այս յեղանակը հետեւյան ե.

Վաղորոք պատրաստում են ավաղը, լվանալով ու մաքրելով տիղմից: Սերմերը խառնում են լվացած ավաղի հետ, վերցնելով ըստ ծավալի մեկին յերեք ավաղ: Հաճախակի խառնելու միջոցով խառնուրդը պիտի հասցնել այն դրության, վոր սերմերը հավասարաչափ բաշխված լինեն նրանում: Այդ խառնուրդը պիտի լցնել փայտյա արկղների կամ տոպրուկների մեջ: Խառնուրդը պետք ե պահել մասնութեամ կամ բնակելի շենքում, միայն հաճախ ջուր ցանելով նրա վրա, վորպեսզե խոնագ վիճակում թա: Այնուհետև պիտի սերմերը հերշված ամաններով թաղի հողի կամ ձյունի մեջ վոչ հողի և վոչ ձյան մեջ թաղված սերմերի խիստ ցրտահարվելուց, նույնիսկ հյուսիսային շրջաններում, յերկայուղ կրելու հարկ չկատ իսկ թեթի ցրտահարումը նույնիսկ անհրաժեշտ ե՝ վաղ և համաչափ ծիւեր ստանալու համար: Ստրատիֆիկացիայի աեղը անկարանային մեծ տնտեսություններում կարող ե լինել ուղղակի բաց դաշտը: Վրա համար հարկավոր ե 60—70 սանտիմետր խորությամբ և ցանկացած լայնության ու յերկարության փոսեր փորել, համարավոր ե նաև ոգտագործել առաջուց ջերմոցների համար պատրաստված փոսերը: Հարկավոր և փոսերի հողը լավ մաքրել և պատերը հզկել: Ստրատիֆիկացիայի համար պիտանի ավաղը պետք է 8—10 սանտիմետր հաստությունը շերտակ փոսել փոսի հատակին և ապա ավաղի վրա ցանել կրբիզը, գարձյալ 8—10 սանտիմետր շերտով, այսպիսով հաջորդաբար նույն հաստությունը պահելով պիտի գուել ստրատիֆիկացիայի յենթակա ամրող կորիզը մինչև փոսի լցիւը: Ստրատիֆիկացիան

փոսերի շըջապատն անձրևների և հեղեղների ջրերից գերծ պահելու համար պետք եւ առուներ պատրաստել:

Ավտոզի հետ խառնած սերմերի պահպանված տեղը շատ խնամվ շպիտի լինի. լավ ե, յեթե այն գոտնվում և ստվերում, պարսպի կամ ջների մոտ, վորովեսպի գարնանը ձյան հալը շատ շուտ չլինի. Ստրատիֆիկացիայի յենթարկվող սերմերը փոսերում պիտի պահել խոնավ վիճակում, դրա համար հարկ յեղած դեպքում պետք եւ հոգը ցնցուզով ջրել:

Այս ձեր ստրատիֆիկացիան նպատակահարմար է գլխավորապես կորիզավորների (դեղձ, ծիրան և այլն) համար:

Ստրատիֆիկացիայի դեպքում անհրաժեշտ է միջոցներ ձեռք տանել նաև մկների դեմ: Սերմերով լի արկդները կամ պարկերը պետք եւ զնել փոսերի մեջ: Ամբողջ ձմեռվա ընթացքում հարկադր է սերմերի շուրջը ձյուն պահել և շարունակ ամրացնել այն: Երկդները հնարավոր եւ պահպանել և փշատերել ծառերի ճյուղերի:

Ստրատիֆիկացիան կարելի յև կատարել աշնան, վերջերից: Ամեայն ամելի լավ եւ չուշացնել և այն ավարտել աշնանը: Առանձնառներ չեն կարելի ուշացնել կորիզավորների (կեռաս, բաւ, դեղձ, ծիրան, սալոր և այլն) սերմերի ստրատիֆիկացիան, վորը պիտի կատարել աշնանը՝ պաղեց հանելուց անմիջապես հետո:

Պետք է նշել, որ «Միբիրկա» խնձորենիների սերմերը ավելի հետ խառնելու կարիք չեն զգում, վորովհետեւ շատ լավ ծլում են նաև գարնան հասարակ ցանքի միջոցով:

Ինչպես արդեն ասվել ե, գարնանը ձյան խիստ արագ հոլչեց պետք եւ սերմերը պահպանել, այլապես կարող են չափազանց վաղ ծլել, իսկ ծլած սերմերի ցանքը դժվար մշակելի յեւ. այս դեպքում ծիլերը հեղտությամբ կոտրվում են, վորովհետեւ սրանը շատ նուրբ են: Սերմերի վաղաժամ ծլելու առաջն առնելու լավագույն միջոցը ստրատիֆիկացիայի յենթարկված տեղերի վրա ձյուն թափելն ու ամրացնելն ե, վերևից ծածկելով ծղոտով կամ չոր տերեթներով:

5. Ֆանի կատարելը

Ցանքը կատարվում է կամ սերմանոցում և կամ անմիջապես անկարանում: Հնդավորների ցանքը կատարվում է սերմանոցում՝ մարզերով: Մարզերը պատրաստվում են 15—30 մետր յերկա-

բությամբ և 120—150 մմ լայնությամբ: Թմբերը կապելուց հետո հարկավոր և մարդկարք փիրեցներ: Հարթել և տափաներ:

Ցանքի ակոսները շինուած են մարդի լայնքի ուղղությամբ:

Ակոսները պատրաստում են ակոսաքաղով (նկ. 2) կամ ցանքի տախտակի ողնությամբ (նկ. 3). ակոսաքաղը գործադրելիս՝ ակոսների ուղղության և նրանց միջև յեղած տարածության ձգությունը վորոշվում և հատուկ չափով, վորը յուրաքանչյուր աշխատող պիտի ունենա: Այդ աշխատանքի միջու կատարութեապահովում և սերմնաբույսերի համաչափ դարդացումը և դյուրացնում և խնամքի աշխատանքները:

Դաշտային և նախալեռնային
գումիներում կորքզափորները մեծ
մասամբ ցանվում են անմիջապես
տեղում — մարդերով, կամ առանց
մարդերի: Մարդերը պատրաստ-
վում են 80—150 մետր յերկա-
րությամբ և 2,70 մետր լայնու-
թյամբ, նայած հողի սելլյեֆին:


Թմբերը պետք և պատրաստել խնամքով և ամուր՝ հետագա հա-
ճախակի վոռոդումները հաջող կատարելու համար, ծանքը մար-
դերում պետք և կատարել շարքերով, թմբերին դուգահետ, նա-
խորոք բգլիցով պատրաստած մարդերում: Այսպիս պատրաս-
տած մարդերում ցանվում և Յ շարք, միմյանցից 90 մմ հեռավո-
րությամբ. շարքերից յերկուսն անմիջապես ընկնում են թմբերի
տակ, իսկ մեկը՝ մարդի կենարոնում: Ցանքը հնարավոր և կա-
տարել մեկ ձիանի բամբակացոն մեքենայով, վերջինս հարմա-
րեցնելով կորիղների մեծությանը և պահանջվելիք հեռավորու-
թյանը կորիղները պետք և ցանել 3—4 մմ խորությամբ, նայած
նրա մեծությանը: Ցանքից հետո անմիջապես պետք և ծածկել
հողով և ջրեր թիստ պետք և հետեւ, վոր կորիղը շարքերում
ուղիղ ցանվի, այլապես հետազայում՝ հողի մշակման և մեքենա-
յացման աշխատանքներում մեծ դժվարություններ կառաջանան:

Ցանքի տախտակի կազմությունը շատ լավ յերեսում և 3-րդ
նկարում: Տախտակի լայնությունը պետք և հավասար լինի մար-
դի լայնության: Մարդառողերի միջի տարածությունը համապա-
տասխանում և միջարքային տարածությանը: Ցանքի տախտակի



Նկ. 2. Ակոսաքաղ

զբա աշխատում և յերկու մարդ, մեկը գնում և մարդի մի կողմանց, մյուսը հակառակ կողմավ։ Տախտակի կողերով սեղմում են մարդի մակերևույթը և տախտակը յերկու անդամ դեպի առաջ և յահ են շարժում։ Ակոսի խորությունը սերմանավորների համար (ինձոր, տանձ)՝ 2—3 մետր, կորիղավորների համար (բալ, կեռաս և այլն)՝ 3—4 մետր։



Նկ. 3. Ցամքի տախտակ

Ակոսաղների յետեից գնում են ցանողները։ Ցանքի խտաւթյունը կախված է մի շարք հանգամանքներից։

Յերբ պատվաստակալը քիչ հաստ ե պատվաստացվից, բայց արածագիծը 2 մմ-ից ավելի չե, հարմար ե կիրառել քամրածել կոպուլիրովկա: Այս դեղքում պատվաստակալը պետք ե կտրել շայնքի ուղղությամբ, բայց վոչ ուղիղ, այլ քիչ թեք, հետո կտրվածքի ավելի բարձր մասից, վայրակի յերկարությամբ, վերին կտրվածքի դիմաց, 3 մմ յերկարությամբ շեղակի կտրվածք անել (նկ. 21):

Պատվաստացվի վրա, լավ աչքերից վորենե մեկից ցած, նույն անկյունով, ինչ կերպ պատվաստակալի վրա յեր արված, համարյա կտրոնի հաստության կիսի չափ կտրվածք են անում: Այս կտրվածքի տակից փայտանյութը սեղածն կտրում-հանում են, հավասարեցնելով կտրվածքի վերին ծայրը, սրանից դեպի ցած շեղակի կտրվածք են անում, ինչպես կոպուլիբրովիայի ժամանակն եր:

Պատվաստացուն պատվաստակալի հետ այնպիս են միացնում, զոր սրանց շեղակի յերկար կտրվածքները լրիվ նստում են իրար վրա, իսկ պատվաստացվի փորվածքը նստում և պատվաստակալի ընդլայնուկի թեթև թեքությամբ կտրվածքի սուք ծայրի վրա. այնունետև փաթաթում և մածիկ են քսում:

Պատվաստի այլ ձեռք ես կան, որինակ՝ ըներկտրվածք, «կեղենի տակ» (նկ. 21) և այլն, վորոնց նկարագրությունն այսակա չի տրվում:

ՊԱՏՎԱՍՏԱԾ ԲՈՒՅՍՈՒԹԻ ԽՆԱՄՔՆ

1. Միտմակներ ստանոլը

Տնկութանի տուադին դաւը, վորտեղ բույսեր տնկելու հենց առաջին ամբան վերջին աչքապատկան են կատարել հետեւաչ տարին արդեն կոչում են յերկրող դաւ: Յերկրորդ դաշտը մի տարուց հետո կկոչվի յերրող դաւ և այնու Մի խռոքով դաշտերի համարակալումը կապված և վոչ թե անկարանի հաղամատում ունեցած նրանց աեղապրումից, այլ վայրակների տեղափոխման մոմենտից Այդ համարակալումը հաստատուն չե, այլ ամեն տարի փոխվում և ամելանալով մեկ համար:

Դադ գարնանը, նախման բոլորջների անելը, աչքապատվաստ արված վայրակների վերին մասը կտրում են պատվաստից 12—15 սմ բարձրությամբ. այդ թողնքած մասը կրում է բուրակ (յեղունկ) անունը, իսկ այդպիսի ետը կոչվում է բուրակով եւ: Այս գեղքում պիտի վոչնչացնել վայրակի բոլը բողբոջները վորը կատարութեն այդու դանակով՝ հեշտությամբ ու արագ: Այս վորի գործողության նշանակությունն ու եյտելյունը հետեւյուն եւ:

Այս բուլը հյութերը, վորոնք պատվաստակալների արմատների միջոցով վերցվում են հողից, բույսի ցողունի միջոցով վեր-

և բարձրանում և արթնացնում բողբոջների կյանքը։ Պատվասառակալի սեփական բողբոջներն արթնանալով կարող են կլանել բոլոր հյութերը կամ նրանց մեծ մասը, խանգարելով դեռ թույլ կպած (պատվասառակած) բողբոջի մնելուն։ Դրանից նա շատ թույլ կդարձնա, նույնիսկ իսպառ կվոչնչանա։

Պատվաստակալի բողբոջները մոչնչացնելով, ապահովում են պատվաստված բողբոջի առատ սնումը և հաջող զարգացումը։ Մյուս կողմից, չի կարելի վայրակը կարել աչքապատվաստ արժած բողբոջին շատ մոտ, փորովհետեւ այդ գեպքում բողբոջը մոռակ պտնվելով վերքին՝ կչորանա, բացի այդ, բութակը (յեղունկը) երկավոր և աղնվացեղ շիվը կապելու համար։

Բութակի ետից առաջ հեռացնում են աչքապատվաստի փաթաթանը, յեթե այդ առաջ չի արված, պատահում ե, վոր միայն արտաքին դիտումը դեռևս լինակատար հիմք չի տալիս վորոշելու աշխապատվաստի կպած լինելը, Այդ գեպքում՝ պատվաստված աչքի տակից պետք ե դանակի ծայրով թեթևակի քերծել վահանիկը, Կանաչ կամ սպիտակավուն գույնը ցույց կտա, վոր վահանիկը վողջ ե, իսկ գորշ գույնը ցույց կտա, վոր այն փչացել ե, Այն պատվաստակալները, վորոնց վրա աչքապատվաստը չի կողել, վերը նկարագրված յեղանակներից մեկով՝ դարնանը պատվաստում են կտրոնով։

Պատվաստված աչքն արագ շիվ ե տալիս և կրում է պատվաստիվ (օկուլիանտ) անունը, Հենց նա յել հետագայում աճում և դառնում ե պտղատու ծառ, Յերբ պատվաստաշիվը աճում, դառնում ե 7–8 մ, այն ճլոպով կապում են բութակից, Մի կողդքեքած պատվաստաշիվը զգուշ ուղղում են՝ ձգելով սկզբում հրճքի մոսարց գեպի բութակի և այստեղ կապում, Յեթե կապը վերառում արվի, պատվաստաշիվը հիմքում ծովածք կստանա, Այս շիխատանքը պիտի կատարել ուշադիր և դգույշ, վոր մատադիվը չկոտրվի։

Դրանից անմիջապես հետո պիտի կատարել պատվաստաշիվը յերկրորդ կապումը, քանի վոր նա ելի յի թեքվում գեպի մի կողմ, վորոշ գեպքերում հարկ ե լինում նույնիսկ յերբորդ անգամ կապել, յեթե արագ աճող պատվաստաշիվը ձգտում — թեքվում ե մի կողմի վրա։

Հետագա աշխատանքը լինելու յե այն, վոր բութակի վրա շացած բոլոր վայրի շվերը յերկալուն պես հեռացվեն, այլապիս նրանք կլին պատվաստաշիվը նյութերը և կթուլացնեն

այն: Հարկավոր ե նույնիսկ ծերատել պատվաստաշվի հսդիր
առաջացած բուօք զերը, յիրը գրանք կհասնեն 15—20 մմ-ի:
Նվերի զարգացումը գնում ե ի զնաս պատվաստաշվի հիմնական
ցողունի զարգացման:

Ամբան վերջերին (սովորաբար
սպաստոսին) պատվաստաշվը փայտա-
նում ե և կարող ե առանց կապի ու-
ղի մնալ: Այդ ժամանակ կտրում են
կտպերը և անցնում են բուրակը կտրե-
լու կարեռ ովերացիային:

Այս աշխատանքը շատ պատառ-
խանառու յե, պահանջվում ե հմտու-
թյուն և զգուշություն: Ետք կատա-
րում են լավ սրված այգեղանակով:
Ովերացիան կատարելիս կանգնում են
ժառի առաջ, աջ վոտքի քիթը դեմ են
տալիս նրա հիմքին, ճշտորեն վորոշե-
լով տեղը և ուղղությունը՝ մեկ ան-
դամից հիմքից կտրում են բութակը:
Կարվածքի մակերեսոր պիտի լինի մի-
անդամայն հարթ և խեցվածքն ազնիվ
չի հետ կազմի 45° -ի անկյուն: Ան-
կարողության կամ անզգության
հետևանքով դանակը կարող է քերծել
պատվաստակալի հիմքը և նույնիսկ
բոլորովին կտրել այն: Աշխատողի ձախ-
ձեռքը պետք ե միանգամայն ազատ
լինի: Նոր աշխատողները պետք ե աշ-
խատանքը հասկանան և փորձառու-
թյուն ձեռք բերեն՝ վայրի ծառերի
ճյուղերն ետելու միջնորդ:

Փարնանային պատվաստի և աշ-
խատվածատի խնամքն ե—թուլացնել կտպերը և, յիրը պատ-
վաստացուները լիովին կպած են, հեռացնել նրանց ամբողջովին:
2. Յերկամյակներ ստանալը

Տնկարանի յիրորդ դաշտում, ոյսինքն՝ վայրակները ձեռ-
փարման հողամասում տնկելու յիրորդ տարում, սկսում են ձելո-
վումք կամ տնկիների սաղարի խնամքը:



Նկ. 22. Բուրակին կտպված ազ-
միլ շիվը ա) բուրակ, բ) աշխա-
տվածատի տեղը, ը) բուրակի
տելի տեղը, հ) պատվաստաշվը,
լ յիլ լլ) կտպերը, ը) բուրակը
եռացնելու (կտրելու) տեղը, յերբ
արդեմ ազմիվ շիվն ամրացել ե

Սյդ ժամանակ տվյալ դաշտում լինում են քիչ թե շատ տարբեր բարձրության միամյակներ: Սակայն նրանցից պետք են ծեավորել այնպիսիների սաղարթները, վորոնք ունեն զրա համար բավականաչափ բարձրություն: Զանազան տեսակների բների բարձրությունը տարբեր ե, այն ե.

ուղղաձիգ սաղարթով խնձորենու համար 60—70 ամ

փոզած	»	»	70 - 80	»
-------	---	---	---------	---

տանձենու	»	50—60	»
----------	---	-------	---

բալենու	»	40—50	»
---------	---	-------	---

սալորենու	»	50—75	»
-----------	---	-------	---

ծիրանու	»	60—75	»
---------	---	-------	---

դեղձենու	»	40—50	»
----------	---	-------	---

Ետողը պիտի լավ հասկանա ծեավորումը և խիստ ուշադիր լինի դեպի այդ գործի կատարումը: Ոգտվելով մոտավորապես 70 սանտիմետրանոց վայցոյա պատրաստի չափից, վորոշում են միամյակի բնի բարձրությունը: Այստեղից վեր հաշվում են միանգամայն առողջ վեց բողբոջ և կտրում են միամյակի վողջ զագաթը՝ այդ վերջին բողբոջից 3—4 ամ բարձր: Վեցերորդ բողբոջից վերև գտնված բոլոր բողբոջները դանակով հետացնում են:

Այսպիսով, բութակը մնում է նշված վեց բողբոջներից բարձր:

Ինչպես միամյակներ ստանալիս «բութակին» կապում եյին պատվաստացիվը, այնպես ել այստեղ՝ «բութակին» կապվում երնի շարունակությունը կազմող ժիվը, վորպեսզի նա ուղիղ աճի:

Բացի նշված վեց բողբոջները, բնի մնացած բոլոր բողբոջներն են աճում և շվեր են տաճաջումում, վորոնց անվանում են հաստացման ըլեր: Ակղբում նրանց պիտի թողնել աղատ աճելու, վորովհետեւ նրանք նպաստում են նրա բատ լայնության աճմանը, հակառակ դեպքում՝ նա կննու վախտ ու թույլ Սակայն յերբ այդ շվերը աճում, հասնում են մինչև 20 ամ յերկարության, նրանք պիտք և ծերատել:


Յերբ սաղարթ կազմելու համար թողնված վեց բողբոջից ամենավերին շիվը աճում է մինչև 6—7 սմ, այն ճշուարվ պիտի կապել բութակիկին, պահպանելով նույն կարգն ու զգուշությունը, ինչ վոր պատվաստացիվը բութակին կապելիս: Ամրան վերջից վոչ ուշ հաստացման շվերը ետում են սողակաձև, այսինքն՝

բոլորովին հեռացնում են կտրելու այդ յեղանակն ամենափոքր գերքն և տալիս և ցցվածքներ չի թողնում:

23-րդ նկարի վրա ճիշտ կտրվածքը ցույց է տրված յերբոք-քը, իսկ մյուսներն վոչ ճիշտ կտրվածք են:

Սկսնակները հմտություն պետք ե ձեռք բերեն վայրի ծառ-երի վրա կտրատումներ կատարելով:

Սովորաբար այդ ժամանակ ել աղատում են կապից մատադ շիվը և կտրում են բութակը, քանի վոր զի՞ն արդեն բավականա-չափ ամրացած և լինում և կապի կարիք այլևս չի զգացվում: Կտրելիս ձախ ձեռքով բռնում են ծառի վերին մասը և աջ ձեռ-քի դանակով միանգամից կտրում են բութակը, միամյակի բռե-թակը կարելու նման:



Նկ. 23. Աղականեվ կտրվածք

Այսպիս, նշված բոլոր պերացիաների և համապատասխան խնամքի հետևանքով, գարնանը ձևավորված միամյակներից ստաց-գում և սաղարթավոր յերկամյակ, սաղարթի առաջին հարկով:

Այս միամյակները, վորոնք սաղարթ կաղմելու բավականա-չափ բարձրություն չունեն, ետևաւ են և կոչվում են հեծոցոնկ, հածորդ տարին վերին բողբոջից անում և նոր շիվ և այն ժա-մանակ կարելի յի նրանց սաղարթի հիմքը դնել իսկ յեթե վե-րին բողբոջը ցրտահար և յեղել կամ ընդհանրապես թույլ ե, գա-գարթը կտրում են ուժեղ բողբոջի վերից, իսկ նրանից վեր թող-նում են բռեթակ, Յ—Ն ան բարձրությամբ՝ ավյալ բողբոջից աճած ժամանակ շիվը նրա հետ կապելու համար:

Տնկիների ձևավորման այս նկարագրած յեղանակը յերկաք ժամանակ միակն եր. այժմ ել մի քանի տնկարաններում պատզա-տու անկրների ձևավորումն այս յեղանակով և կատարվում: Մա-կայն վերջին տարիներս ոկտեց առածվել անկիների ձևավորման կատարելադրծված յեղանտեկ:

Տնկիների ձևավորման վերը նկարագրված հինգյուղյա սպարթի յեղանակն ունի լուրջ թերություններ.

ա) սաղարթի բոլոր հինգ ճյուղն ել այստեղ շատ մոտ են միմյանց, ծառն աճելու հետ նրանք ավելի ու ավելի են փախադարձ ճնշում դդում, վորը գժվարացնում և հյութաշարժությունը ծառի միջավ.

բ) սաղարթը շատ խիտ ե լինում, լույսը բավարար չափով ներս չի թափանցում, վորը մեացնում և ճյուղերը ստվերուածան-զերում և իջեցնում և բերքի քանակն ու գորակը.

գ) խտության հետևանքով թույլ աճած ճյուղերը՝ պտուզ-ների ծանրությունից կոտրատվում են, մեծ քանակությամբ հե-ծափայտեր են պահանջվում.

դ) ճյուղերի խիտ դասավորությունը. նրանք աճում են՝ դե-պի բունը՝ սուր անկյունով, վորի հետևանքով ամուր չեն ներա-ճում ըստ հետ և հեշտությամբ կարող են ճեղքվել:

Սաղարթ ստանալու ամերիկական նոր յեղանակը զերծ և թված վերուիշյալ բուրը թերություններից բացի այդ, հսկանդեալ ունի մի շարք առավելություններ: Զեավորման այդ յեղանակը կոչվում և լիդերային սիստեմ:

ՓՈՓՈԽՎԱԾ ՀԻԴԵՐԱՅԻՆ ՅԵՂԱՆԱԿԻ ԱՐԱՋՆԱՀԱՏԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զեավորման փոփոխված լիդերային յեղանակի գլխավոր տար-բերությունը հնից (գերմանականից) այն և, վոր նրա սաղարթը վոչ թե հարկերից ե կազմվում, այլ հիմնական ճյուղերը, թվով մինչև 5–8, ըստ վրա համաստրաչափ դասավորված են միմյանցից 20–30 մ հեռավորության վրա: Զեավորելիս բնին տրվում և 50–90 մ բարձրություն: Բացի հիմնական ճյուղերից, անեցվում են և յերկ-ըրդղական ճյուղեր, վորոնք դասավորվում են հիմնական ճյուղերի վրա մեջմեջ (յերկու կողմից) և մոտ 50 մ բնից ու 30–50 մ միմյանցից հետու: Սաղարթում տվյալ յեղանակով հարկ յեղած քանակությամբ ճյուղեր ձեավորելուց հետո՝ ուղղաձիգ, բրդածե ուղարթ ունեցող սորտերի կենարոնական շիվը հեռացնում են:

1. Մառերի բնի բարձրությունը

Այդում հողը մշակելու համար կցորդ գործիքներ ունենալու հետևանքով ապահովվում և միջարերի ամբողջ լայնության

վարն ու վիխրեցումը, և պտղատու ծառերի համար բարձր բռն առաջեցելն ավելորդ ե դաշնում: Դրա համար պտղատու ծառերի սաղարթը վոփոխված լիդերային յեղանակով ձևավորելու գեպքում, համաձայն սորտի բնի բարձրության, սահմանվում ե հետևյալը:

ա) ուզղաձիգ, բրդաձև սաղարթով խնձորենու սորտերի բների բարձրությունը 60—70 սմ.

բ) սովորական ձևի սաղարթով ունեցող սորտերի (Անտոնովկա, Բաբուշկինո, Շարեյֆլինդ, Բորովինկա, Ապորտ, Պապիրովկա, Սլավյանկա, Բեզսեմյանկա, Բելֆեր, Կիտայկա) բարձրությունը 70—80 սմ.

գ) փակած և դեղի ցած խոնարհված սաղարթով սորտերի բնարիչնոյ, Շաֆրանի և ուրիշները) բարձրությունը 80—90 սմ.

դ) տանձենու 50—60 սմ

ե) բալենու 50—60 »

զ) սալորենու 50—60 »

է) ծիրանու 60—75 »

ը) դեղձենու 40—50 »

թ

2. Սաղարի հիմնական նյութերի միջև յեղած տարածությունը

Սաղարթի հիմնական ճյուղերի միջև յեղած տարածությունը պիտի սահմանվի սորտերի և տեսակների առանձնահատկությունների ու աճման ուժի համաձայն: Ուստի ծառերը փոփոխված լիդերային յեղանակով ձևավորելու դեպքում հարկավոր ե ըստ հարավորին պահպանել հետեւյալ տարածությունները: Թույլ ե միջակ աճեցողություն ունեցող խնձորենու սորտերինը (որինակ՝ Բորովինկա, Անտոնովկա և այլն) պետք ե լինի մոտավորապես 20—30 սմ, տանձենունը՝ 15—25 սմ, բալենունը և սալորենունը՝ 10—20 սմ:

3. Սաղարի հիմնական նյութերի բնակը

Սաղարթում հիմնական ճյուղերն աճեցվում են հետեւյալ քանակով:

ա) թույլ աճեցողություն ունեցող խնձորենու սորտերին արվում ե որինակ, Բորովինկա և ուրիշները՝ 5—6 ճյուղ:

բ) միջին աճեցողություն ունեցող սորտերին (Անտոնովկա և աւրիշները)՝ 5—7 ճյուղ:

- գ) ուժեղ աճեցողություն ունեցողին՝ 6—8 ձյուդ.
 դ) բալենու և կեռասենու սորտերին 4—5 ձյուդ.
 ե) տանձենու սորտերին՝ 4—6 ձյուդ:

4. Գլխավոր նյուղերի դասավարությունը սաղարքի ռուշը

Մասերը փոփոխված լիգերային յիղանակով ձևավորելու դեպքում անհրաժեշտ և ազահովել հիմնական ճյուղերի (սաղարթի ջուբջը) հավասարաչափ դասավորումը, հակասակ դեպքում սաղարթն անհամաշափ զարգացում կունենա, վորը կանդրագանա ծառի ամրության և քամուն զիմադրելու կարողության վրա:

ՓՈՓՈԽՎԱՇ ԼԻԴԵՐԱՅԻՆ ՑԵՂԱՆԱԿՈՎ ՍԱՂԱՐԹԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Մասը ձևավորելու դեպքում անհրաժեշտ և նախեառաջ դրոշել թե ընի զրա մեկ տարօւմ քանի գլխավոր ճյուղ պիտի աճեցվի: Մեծ մասամբ տարվա ընթացքում պետք և աճեցնել կողքի մեկական ճյուղը միայն: Սակայն առանձին դեպքերում, աճեցողության լավ զայմանների մեջ գտնված և թւժեղ աճող սորտերի համար կարելի յն մի տարօւմ յերկու և ավելի ճյուղ պահել:

I. Մասի սաղարքավարամբ մեկ նիմնական նյուղով

Զեսպորման ժամանակ, այսինքն՝ վաղ գարնանը, սաղարթի առաջին հիմնական ճյուղը կտղմելու համար ընտրվում և տվյալ սորտի միամյակի համար սահմանված ընի բարձրության վրա լավ զարգացած ու չմնաված մեկ բողբոջ: Սրան ավելացնելու դարձյալ 3—5 բողբոջ ու վերջիններից բարձր բուննետում են:

Ուղղաձիգ սաղարթ ունեցող սորտի (ինչպես, որինակ, կարիչնոյն, Մուկուլյան Գրուզավկա և ուրիշները) այս ետք կատարվում և առանց բութակը թողնելու, իսկ փուլած սաղարթ ունեցող սորտի (Շարեյֆլինդ և ուրիշները) ետք՝ բութակը թողնելով, վորին և կապվում և զերին կենտրոնական շիվը, յերբ այն 6—8 ամ բարձրության և հասնում: Հուլիսի վերջին կամ ոգոստոսի սկզբին բռնթակը կտրում են:

Առաջին ճյուղի համար ընտրված բողբոջին 3—5 բողբոջ ավելացնում են նրա համար, զոր ծառի ընի և ճյուղի միջև լայն

անկյուն կազմելու և ամուր տնկու պայման ստեղծվիր Այդ արգութ և նրա համար, վոր ծառի անեցողության առանձնահատկությունների շնորհիվ, վորպես կանոն, բնի վրա աճած կողքի շիվը, վորքան նրա վերին ծայրին մոտ ե, այնքան բնից սուր անկյունով ե, հեռացած և, ընդհակառակն, վորքան հեռու (այսինքն՝ ցած) և ընկած կողքի շիմը, այնքան ավելի բութ անկյուն և կաղմվում նրա և բնի միջն, վորի հետեւանքով և նբանք ավելի ամուր են համամում:

2. Ծառի սաղարթավարումը՝ սաղարթի յերկու նյուղ պանելով

Մեկ տարում սաղարթի յերկու ճյուղով ծառը սաղարթավորնու գեղքում՝ բացի բնի վորոշ բարձրության վրա նկատի առած բողբոջից, կատարվում ե նմանապես լավ զարգացած յերկութորդ բողբոջի ընտրությունը, հաշվի առնելով ծառի ապագա ճյուղերի անկյուններն ու հեռավորությունը: Այս վերջին բողբոջին ավելացվում ե ևս 3—5 բողոք և ծառն ետում են այն ձևով, ինչպես մեկ ճյուղ թողնելու դեպքումն եր:

Յերբ ձևավորված ծառի նոր շվերը հասնում էն 15—20 սմ յերկարության, սպա այն շվերը, վորոնք սաղարթի հիմնական ձյուղերի համար ընտրված բողբոջներից են աճել, քննության են առնվում և յեթե դրանք լավ են զարգացած, բնից նորմալ անկյունով են հեռացած (45°) և միշտ են դասավորված սաղարթի շուրջը—թողնում են, իսկ մնացած բոլոր շվերը, բացի կենտրոնականից, ծերատում: Իսկ յեթե գլխավոր ճյուղի համար նախատեսված ճյուղերը նշված պահանջներին չեն բավարարում, սպա ծերատման ժամանակ նրանք փոխարինվում են այնպիսիներով, վորոնք ավելի համապատասխան են, կենտրոնական շիմը ևս, յեթե թույլ ե զարգացած կամ կոտրված ե, փոխարինվում ե ուրիշ ավելի ուժեղով, վարն անպայման պիտի կապվի բութակին:

3. Ծառի օվերի 2-րդ ծերատումը

Շվերի ուժեղ աճման գեղքում, վորը տնկարանի պայմաններում հաճախ ելինում, առաջին ծերատումից մեկ յերկու տառնորյակ հետո կատարվում ե շվերի յերկրորդ ծերատում: Սրանով ասղարթի լիդերային սիստեմով ձևավորման գեղքում ձևավա-

բում առաջին տարում վերջանում է, յեթե ընի (առաջին հիմնական ճյուղից ցած) հաստացման շվերի կտրելը չհաշվենք, վերը կատարվում է ոգոստոսի կեսին:

4. Զեվսիմում ռարանակելը յերկորդ տարում

Յերկրորդ տարում (վաղ գարնանից) կատարվում և սաղաբթի հետևյալ մեկ կամ յերկու ճյուղի աճեցումը: Յեթե աճեցվում է միայն մեկ ճյուղ, ապա անցած տարվա կենտրոնական ճյուղի վրա ընտրվում է մեկ բողոք (յերկրորդ կամ յերրորդ ճյուղի համար): Այդ բողբոջը պիտի լավ զարգացած լինի, չվնասէած և գտնի վերջին ճյուղից ընդունված հեռավորության վրա ու սաղաբթի շուրջը ձիջա դասավորված:

Տվյալ բողբոջին ավելացվում է ելի 3—5
բողբոջ, և շիվը կտրվում է նույն կերպ, ինչպես
առաջին տարում: Իսկ յերկրորդ տարում՝ յերկու¹
ճյուղ աճեցնելու դեպքում՝ կենտրոնական շիվը
կտրելուց առաջ ընտրվում է յերկու բողբոջ նույն
ձևով, ինչ ձևով այս աշխատանքը կատարվեց
ձեռավորման առաջին տարում:

5. Սաղարի զիավոր ճյուղերի եթ յերկորդ տարում

Նոր ճյուղերի աճեցման և կենտրոնական
շիվի ետելու ժամանակ կատարվում է նաև անցյալ
տարվա աճեցրած հիմնական ճյուղերի ետք՝ թող-
նելով նրանց կենտրոնական շիվը 8—12 ու կարճ։
Սաղարթի ճյուղերի ետն անպայման պետք է հա-
մաձայննեն նրանց զարգացման ուժի (յերկա-
րության, լայնության), սաղարթի ճյուղերի դասա-
վորության և ընի ու ճյուղերի միջն կազմած ան-
կյունների հետ: Վորքան ուժից են կողքի ճյուղերը
և վորքան գեպի վեր ուղիղ են աճած, այնքան ու-
ժեղ կարող ել լինել նրանց ետք, Յեկ, ընդհակա-
ռակը, թույլ և ավելի հորիզոնական աճած ճյուղերը պետք է
թողնել վորքես որենք հարկավոր ե նիշել վոր սաղարթի ներ-
քեաւմ դասավորված հիմնական ճյուղերը հարկավոր ե ետել այն-
ք թույլ, քան վերեւում դասավորվածները, վորպեսզի սաղարթի
առանձին հիմնական ճյուղերը հատապայում իրենց աճեցմամբ
մեկը մյուսին չգերազանցեն (տես № 1 և 2 սխեմատիկ նկարները):

Կ. 24. Պտղառու-
թամբ փոփոխված
վիշերային յնդա-
նակով ձեվավա-
րումը մեկ հիմ-
նական նյուելի
աճեցմանը (տըն-
կարանում)

Ետի ժամանակ կտրվածքը պիտի կատարել մաքուր և մացած բողբոջները չվշասել:

6. Սաղարի հոստացման նյութերի կտրելը

Նիմական ճյուղերն ետերուց զատ, պետք է կարևացնել օպարթի հիմնական ճյուղերի միջև յեղած՝ յերկրորդական (հաստացման) ճյուղերը։ Այս ճյուղը պետք է կտրել 10—15 սմ յերկարությամբ։ Այս աշխատանքը ճիշտ կատարելու համար պետք է ուշագրություն դարձնել ծառի հաստացման ճյուղերի զարգացման ուժի վրա, վորպեսդի հաստացման ճյուղերը շգերազանցեն հիմնական ճյուղերին։ Իսկ յեթե այդ ժամանակ պատահում են ավելի փարթած աճած յերկրորդական շվեր, վորոնք կարող են խանգարել կենտրոնական և հիմնական շվերի աճմանը, այդպիսի շվերը «ողակածե» կտրվածքով հեռացնում են։ Պետք է ընդգծել վոր չի կարելի հիմնական և յերկրորդական ճյուղերի ու կենտրոնական շվի միջև յեղած բոլոր շվերը միաժամանակ հեռացնել վորովհետեւ անհրաժեշտ են բնի հաստացման և ծառի մեջ սննդարար նյութերի կուտակման տեսակետից։ Բայց այդ, այս շվերը կարմացրած վիճակում պահելու դեպքում պայի առաջին բնրքը պիտի տան։ Այս շվերը մի քանի տարի կարող է ծաղկած սննդարար նյութերի կուտակման հեշտությամբ հեռացնել։

Նկ. 25. Պաղտառ
ծախքի փոփոխված լի-
դերային յեղածներով
ձևավարության յերկու
հիմնական ծույնի
անցմամբ (տնկա-
քանակությամբ)

7. Կմախմային յերկրորդական նյութերի անեցումը

Նիմական ճյուղերի կրտքից աճած շվերը նույնպես յենթակա չեն հեռացման, այլ կարճացվում են մոտավորապես մինչև 12—15 սմ, ընդ վորում այդ շվերից մի քանիսը պետք է թողնել՝ յերկրորդական կմախմային ճյուղեր կազմելու համար։ Այս դեպքում ընտրում են հիմնական ճյուղերի հետ շմբցող ուժեղ և սաղարթից գեղի դուրս աճող ճյուղեր, վորոնք պետք է մեկը մյուսից դասավորված լինեն 30—50 սմ հեռավորության վրա։ Ցուրքանչյուր հիմնական ճյուղի վրա աճեցնում են այդպիսի կմախմային յերկրորդական ճյուղերը (մեկը՝ մի կողմից, մյուսը՝ մյուսից՝

8. Ծառի ձեփավորումը յերրագդ տարաւմ յեկ նետագայում

Նույն յեղանակով, ինչպես նկարագրված ե սաղարթի ձեռվորման առաջին 3—3 հիմնական ճյուղերի նկատմամբ, կատարվում ե նաև մասցածի՝ տարեն մեկ, կամ՝ ուժեղ աճեցողության դեպքում՝ յերկու ճյուղի աճեցումը:

Աճեցրած ճյուղերի ետք տարեցտարի պետք ե ավելի թուլացնել: Բնդիանուր առմամբ սաղարթի առանց աստիճանավորման յեղանակի լրիվ ձեռվորման համար անհրաժեշտ ե 3—4 տարի:

9. Կենարնական տունցտային նյութերի եթր



Բրդաձե սաղարթ ունեցող փոփոխակաների, ինչպես, որինակ՝ «Անիսի» և ուրիշների հիմնական ճյուղերի անհրաժեշտ քանակի ձեռվորումից հետո կատարվում ե կենարոնական ճյուղի ետք: Այդ ետք չի կատարվում անհրաժեշտ քանակությամբ ճյուղեր աճեցնելուց անմիջապես հետո, այլ 2—3 տարուց հետո, վորպեսզի վերջին հիմնական ճյուղն աւզդահայաց դիրք չընդունի:

Կենարոնական շիվը կտրվում ե ուղղակի սաղարթի վերջին հիմնական ճյուղի վերեկց. Դրանով պետք ե սաղարթի ձեռվորումը վերջացած համարել: Ի՞նընստինքյան հասկանալի յէ, վոր ձեռվորումից հետո անհրաժեշտ ե կանոնավոր կերպով, յերթե զոյ ամեն տարի, գոնե տարեկմեջ սաղարթը թեթևակի նոսրացնել և ետել, վորպեսզի ժամանակին կանխվի սաղարթի խտացումը և առանձին ճյուղերի խաչաձեռւմը:

10. Խնամքի աշխատանքները: Գնասառուներ ու նիվանդուրյաւններ յեկ պայտաք նրանց դիմ

Հողի և ըույսերի խնամքին վերաբերող մի շաբք աշխատանքներ արդեն նախապես բացատրված են: Սյատեղ անհրաժեշտ և միայն մի քանի լրացումներ անել: Զափազանց կարեսը

և պայքարը մոլախոտերի դեմ: Տնկարանը գցելու առաջին տարիները, յերբ հողի խորը մշակություն և տեղի ունենում, մոլախոտեր քիչ են լինում: Բայց հետո, յերբ համապատասխան ուշադրություն չի գարձվում, մոլախոտերը ուժեղանում են, չուրացնում հողը և դժվարացնում մշակության աշխատանքները:

Մոլախոտերի դեմ պետք է համառոքեն պայքարել և յերբեք շահնդուանալ ձեռք բերված հաջողություններով: Վորպես կանոն, յերբեք չպիտի թողնել, վորպեսզի մոլախոտերը ծաղկեն և սերմնավորվեն: Գետք և նկատի ունենալ, վոր մոլախոտերի սերմերը զլխավորապես զրոյց են բերվում: Դրա համար ել անհրաժեշտ է մոլախոտերը վոչնչացնել վոչ միայն անկարանի կուլտուրական առածնության, այլև առուների, ճանապարհների, անկարանի յեղբերի վրա և այլն: Հարկադրը և հաճախ մոլախոտերը հնձեւ խոկ այդ հասարակ ու հեղա բան և նույնիսկ սպավետ (ոգագործվում և վորպես կեր):

Տնկարանի ցանքի տարածության և սածիլանոցի վնասատուներն են զլխավորապես վիճը, մայիսյան բզեղը, արջուկը, իսկ հիվանդություններից՝ արմատային քաղցկեղը և քոսը:

Լվին.—Բոլորին հայտնի փոքրիկ կանաչ միջատներ են, վորոնք հարձակվում են թե վայրակների և թե տնկիների վրա: Տեղավորվելով տերեւների, և կանաչ զվերի վրա՝ ծծում են վերջիններիս հյութը, դրա հետեւնքով ել տերեւներն այլանդակվում են ու կուչ գալիս, բույսի սննդառությունը թուլանում է, զվերը ծածավում և սրանց անումը կանգ և առնում: Լվիճ զատ և լինում հոտկապես ամրանը, վորոնք մեծ չտփերի յեն հասնում սպասում սկզբներին: Պայքարի միջոց—սրսկել նավթային եմուլսիա, կանաչ սապոնի հետ, ծխախոտի եկստրակախ լուծույթ—ամապատճենի մշղներին: Պայքարի միջոց—սրսկել նավթային եմուլսիա, կանաչ սապոնի հետ, ծխախոտի եկստրակախ լուծույթ—ամապատճենի մշղներին:

Մալիսյան բզեզը նույնպես ամենքին հայտնի յէ: Նրա թըթուրներն առանձնապես վնասում են սերմնաբույերին, վերապնկված բույսներին, կտրոններին, ուտելով նրանց արմատները: Էզեղները մասսայերեն լինում են անտառամերձ անկարանների փլարուն, հումուսով հարուստ հողերում: Թըթուրները պիտի վարի ժամանակ հավաքել, իսկ բզեզները՝ յերբ սկսում են թուչել և մեծ բաղմանթյամբ նստել անկարանի ծառերի վրա: Ուշ աշնան

հերկը նույնպես ողնում և թրթռուների վոչնչանմանը, վորոնք հողի յերեսն անցնելով, մասամբ թոշուների կեր են գառնում և մասամբ փշանում են չորանալուց և ստանամանիքներից:

Հարավում անկարանին առանձնապես մեծ վնաս և հասցնում արջունիր, Սա գորշ, խոշոր միջատ ե, սժոված հողը փորելու վերջավորություններով, ապրում և փիրուն և բերբի հողերում, ուռում և բույսերի մատադ արմատները: Ցանքի մարդերում արջունիը յերբեմն վոչնչացնում և ծիլերի ամբողջ շարքեր: Պայքարի միջոցները, ա) թունագորում են մկնեղի հետ միտուն յիփած ցեղիպատացորենի սերմերով, սակայն պետք և զգուշինել չթունավորել կինդանիներին և անգամ մարդկանց, բ) ուշ աշնանը գոմաղբից շփորսող կույտեր» սարքելով, վորոնց տակ միջատները մեծ բակմությամբ հավաքվում են ձմեռելու, վաղ գարնանը կույտերը քանդում և վոչնչացնում են միջատներին, գ) այս կամ այն աշխատանքի ժամանակ հողի մեջ դանելով մեծ կլոր անցք, զորը տանում և դեպի որջուկի բունը, փորում են հողը անցք հանապարհով մինչև բունը և վոչնչացնում արջունին, որա ձվերը կամ ձակուկները, վոր կազմում են թվով 60—300 միջատ:

Տնկարաններին խիստ վնասում են, ինչպես արդեն մտանաշնչեց, մկներն ու նապաստակները, Մկների գեմ պայքարելու միջոցներն արգեն ցույց են տված դրբույթի համապատասխան տեղերում: Նապաստակները ձմեռը խիստ փչացնում են տնկիները, կրծելով նրանց մատադ շվերն ու կեղեր: Լավագույն միջոցը տնկարանի շուրջը ամուր ցանկապատ քաշելն ե:

Քուր (ուրախ) արտահայտվում և կանաչավուն սև բծերի տեսքով, անհավասար ճառագայթանման յեղբերով և լինում է տերեկների և մատադ շվերի գրա:

Առանձնապես ուժեղ զարգանում և խոնավ տարիներին, Քուր յերեան և գալիս սնկի ձեռով մեր աչքին անտեսանների չափով: Հիվանդ տերեկները վատ են անում, դեղնում և շուտ են թափառում: Հիվանդության ուժեղ զարգացման շրջանում տերեկները մեանում և կուշ են գալիս, բույսերը շատ են տուժում և մինչեանդամ չորանում են:

Քուրի գեմ պայքարելու համար պետք և վայքակներն ու անկիները սրոկել բորդոյան հեղուկով, վորն սղնում և նաև բռյամբի ուրիշ շատ հիվանդությունների վաչնչացմանը: Ամեն մի ացգեղործ պետք և իմանա ոյլ հեղուկի պատրաստելու: Հիշեցնենք միայն, վոր բորդոյան հեղուկը պատրաստվում է 100—120 գր

Պղնձարջասպ և 50—60 գր նոր այբած, չհանգտծ կիր մեկ դույլ ջրում խառնելու հաշվով։ Պղնձարջասպը և կիրը լուծում են տռանձին ամաններում (փայտի և վոչ թեթեղի) և ապա դահուզադ լցնում են մի ուրիշ ամանու լուծույթը պատրաստում են միայն մեկ որվա համար, վորովհետև նա շուտ և կորցնում իջ ուժը։ Սրբումը պիտի կատարել վաղ գարնանը, մինչ քրոսի յերեվալը, իսկ հետո ամեն 15—20 որը մեկ անգամ կրկնել՝ մինչև ամառվա վերջը։

Մրմատի խողկեղ։—Արմատների գրտ և արմատավղիկի կողքին առաջացնում ե փխրուն, խցանաձև զանազան մեծության ուսուցքներ։ Առանձնապես վտանգավոր են արմատավղիկի ուսուցքները։ Արմատի քաղցկեղով բռնված տնկիները վատ են զարդանուա։ Արմատի քաղցկեղն առաջանում ե մանրեներից։ Վորտեղ յերևացել ե արմատի քաղցկեղը, հետեապես այնտեղ հողը վարակված ե։ Տնկուրանում արմատի քաղցկեղ հայտաբերելու զեպքում անմիջապես այդ մասին պետք ե հաղորդել համապատասխան հաղային վարչության։

ՏԵԿԻՆԵՐԻ ՀԱՆԵԼՆ ՈՒ ՓՈԽԱԴՐԵԼԸ

1. ՏԵԿԻՆԵՐԻ պահանջմող վարակը

Ամեն մի պաղատու այզի մի քանի առանցակ տարիների գոյության հաշվով և տնկվում։ Պտղատու ծտաերը կազմում են այզու հիմքը, զրա համար ել տնկիների ամեն տեսակի թիրությունները ծանր են աղղում այզու արդյունավետության վրա։ Ծտաերը պետք է բոլոր կողմերով լավ և անգամ անթերք լինեն, այսինքն՝

ա) լրիվ համապատասխանեն այն սորտին, զորի անունով տնկարանից բաց և թողնվում։

բ) ճիշտ բուծված լինեն, այսինքն՝ ունենան ընի անհրաժեշտ բարձրություն, կանոնավոր սողարթ՝ լավ զարգացած հիմնական ճյուղերով։

գ) լավ արմատային սիստեմ։

դ) հանելու ժամանակ լրիվ հասունացոծ լինեն։

ե) ասող լինեն և մեխանիկական վկասվածքներ չունենան։ Աճեցողության վերը նկարակրված պահանջներին շրավորաբռն տնկիները թողնվում են տնկարանում, վորովհետև բարենպառ տնկիները թողնվում են տնկարանում, վորովհետև բարենպառ

զայմանների ու հետագա ավելի հոգատար խնամքէ շնորհիվ լու-
ժըրակ անկիներ են դառնում, իսկ այն անկիները, վորոնք չեն
համապատասխանում անկանյութին առաջարվող վերը նշած պա-
հանջներին և հույս չկա, թե հետեւյալ տարվա ընթացքում կա-
րող են ուղղվել, պետք ե խօստանվեն:

2. Տնկիները հանելու աշխատանքները

Տնկարանից անկանյութը բաց թողնելը շատ պատասխանա-
ռու և հաճախ խիստ լարվածություն պահանջող աշխատանք ե:

Սրա համար ել այս աշխատանքը պետք ե կաղմակերպել
նախորոք մշակված հատուկ պլանի համաձայն, ըստ վորում ժա-
մանակին պետք ե պատրաստել անհրաժեշտ նյութերը, գործիք-
ները և փոխադրական միջոցները, ունենալ կարող մասնագետների
կողմից զեկավարվող բանուժի հարկ յեղած քանակը և այլն: Այս-
պէս լավ ե անկիները հանել աշխանը և ծայրահեղ դեպքում՝ միայն
դարնանը, յերբ անկաբանում ե այդիներում խիստ լարված աշ-
խատանք և գնում:

Այս պատճառով ել անկիները գարնանը փախադրելիս՝ ամե-
նափոքը ուշացման դեպքում՝ կարող են աել հասնել արդեն աճած
վիճակում, վորի հետեւանքով և վատ են կպչում: Աշնանը անկի-
ները պետք ե հանել միայն այն ժամանակ, յերբ նրանց փայ-
տանյութը լավ հասունացել ե: Այնտեղ, վորտեղ կարճ աշուն ե և
եեռավոր փոխադրումների յե սպասվում, կարելի յե արհեստական
և անապարհով արագացնել փայտանյութի հասունացումը, վորի
համար անհրաժեշտ ե.

ա) անկիները հանելուց 1—1,5 ամիս առաջ գաղարեցնել
փերեցումն ու ջրելլը.

բ) վորոշ չափով կտրտել տնկիների արմատները 10—15 որ
տառջ:

Ցեթե աերեները դեռ չեն թափվել, պետք ե մինչ անկիներ
հանելը պոկոտել, բայց այս գործողությունը պետք ե շատ զգու-
շությամբ կատարել աշխատելով չվնասել աերեածոցերում գանվող
բռնըոշները:

Տնկիները կարելի յե համատարած կերպով հանել ձիռ գու-
թանով: Այս աշխատանքը կատարելու համար տարբեր տեսակի
դաշտաններից մեզ մատ հաճախ գործադրվում ե Ժարկովի փորիչ

գութանը, վորի մասին արդեն ասված եւ Այս գութանով կտրտած անկիները հողից հեշտությամբ են հանվում, արտադրողականությունը ուժ է, բայց 4—5 ձիռ ուժ և պահանջում: Գործադրվում են նաև ամերիկյան փորիչ գութանը, վորն աշխատում է կորացրած աղեղի վրա ամրացրած պողպատե դանակով: սա միանգամից կտրում է մի շարքի տնկիների արմատները: Դանակի բութ մասին ամրացրած յեանկյունաձև հատուկ հարմարանքը բարձրացնում է կտրված տնկիները, վորը և զգալի չափով հեշտացնում է սրանց ընտրությունը: Արմատների կտրելու խորությունը կարելի յե կարգավորել: Ամերիկյան գութաններն աշխատում են յերեք զույգ ձիերով, վորոնք զնում են հանվող շաբաթի յերկու կողմից՝ միջարքերով:

Գութանները ձեռքի աշխատանքի համեմատությամբ 15 և ավելի անգամ շատ արագություն են տալիս: Ժարկովի գութանն արագ և աշխատում և փորվածքի վորակն ավելի բարձր է, քան ամերիկյան գութանինը: Գութաններով հանելու բացասական կողմը միայն այն է, վոր սրանցով կարելի յե միայն համատարած կերպով հանել տնկիները: Ընդհակառակը, ձեռքով հանելու դեպքում, չը արդացած անկիները կարելի յե պահել տեղում, վոր և ապահովում են րանց ավելի հուսալի աճը հետեւյալ ատրում:

Զեռքով հանելու դեպքում բանվորները կանգնում են զույգ գերով, տնկու մի կողմից, հիմքից 25 մմ-ի վրա կիսաշրջանաձև և 1,5—2 սմինաչափ առու յեն փորում, կտրելով հանդիպող արմատները: Հետո աշխատողներից մեկը ձեռքով ընից ընկերով տունկը թեքում և առվի կողմը և քիչ-քիչ քաշում գեղի իրեն: Այս ժամանակ մի ուրիշ բանվոր բահի սուր ծայրով հիմքից 25—30 մմ-ի վրա կտրում ե արմատները, վորից հետո առաջին բանվորը տունկն զգուշությամբ ամրողջովին հանում է:

Յեթի միանգամից մի քանի տնկիներ են հանվում, այս գեղքում յուրաքանչյուրի համար առանձին առու փորելու կարելիք չկա, այլ միայն մի ընդհանուր առու յե փորվում: Հանված տնկիները նորից պետք ե դնել առվի մեջ և հողով ծածկել: Ամենակարճ ժամանակով անգամ չի կարելի տնկիների արմատները բաց պահել:

Յեթե հանված տնկիներն անմիջապես չեն ուղարկվում, ապա տեսակավորելուց հետո հարկավոր ե թաղել Այս արվում են նույն կերպ, ինչ կերպ ցույց եր արված վայրակների վերաբերյալ:

Յ. Տնկիների տեսակագործումը, նակագործումն ու փախադրումը

Հանված և առաջման կամ ժամանակավորապես թողնելու յենթակա տնկիները պետք եւ տեսակավորել հանելու ժամանակ պետք եւ հետեւ, վորպեսդի տեսակներն ու սորտերը իրար շնորհնվեն:

Հանելուց հետո տնկիները պետք եւ խմբավորել ըստ վորագանի ցուցանիշների: Ըստ վորակի տեսակավորման ցուցանիշներն արդեն վերկում ցույց են տրված: Պետք եւ տեսակավորման դորձը լավ դնել և խիստ հետեւել նրա կատարմանը:

Մոտիկ փոխադրումների դեպքում, յերբ տնկիները ավտոմատիկով կամ սայլով փոխադրելուց 1—2 որից ավելի ճանապարհ չեն գնում, հակավորելու կարիք չկա, այլ ուղղակի դարսում են կանգնած դիրքում, նախորոք արմատները պատելով մամուռի թաց շիրտով: Տնկիներն արելոց պետք եւ պաշտպանել ըրեցնուով: Հեռավոր փոխադրումների դեպքում՝ գնացքով կամ ավտոյով՝ պետք եւ տնկիները հակ կապել: Հակավորման նյութերն են—ծղոտ, մամուռ, ուգոժա, յերկաթալար, խոիր, կանեփի թել (վալորած) և այլն:

Տնկիներից նախ պետք 5—10 հատից փոքր կապեր անել: Տնկիները կազում են դադաթներով մի կողմը, իսկ արմատներով՝ մյուս:

Յերկամյակների ընդհանուր կապի մեջ տեղավորում են 30—50 տունկ, իսկ միամյակների դեպքում՝ 100:

Ավելի լավ եւ աշխատանքը կատարել հակավորման սրահներում: Աշխատանքի կարգն այսպես է. գետնի վրա 7—8 շարք յերկաթալար են շարում, վորոնց վրա ծղոտի մի շերտ փուռմ, իսկ սրանց վրա ել յերկրորդ շերտը, նրանց վրա ել տնկիներն են սարածում արմատները մի կողմը, իսկ դադաթները՝ մյուս:

Ծղոտից պատրաստած այս ծածկոցը պետք եւ տնկիներից յերկար լինի—սըմատների կողմից 30—35 սմ, իսկ դադաթների՝ 15—20:

Արմատների մեջ և սրանց շուրջը թաց մամուռ են դնում, իսկ ցողունների և ճյուղերի միջև՝ փափուկ ծղոտ: Տնկիները վերելոց ևս ծածկում են ծղոտով: Այս ամենից հետո յերկաթալարի ծայրերը միացնում են, պինդ ձգում հակը և վոլորում, կապելու համար կարելի յե ոգտվել հատուել դազգահներից: Հակի արմատների կողմի մասում ծղոտի վերջավորությունները ձգում են և հյուսում:

Այս կեմերը ամբացնում են կտնեփի թելերով, գորշ և սրանց վրա գործվում ու ամբացվում ե մոտակա յերկաթաւարին։ Հակերը պետք ե համարակալված լինեն և պիտակ փակցրած։ Յեթե հակի մեջ մի քանի սորտի տնկիներ կան, վորոնք կարող են թույշտարվել միայն ամենածայրահեղ դեպքերում, այն ժամանակ պիտակն անհրաժեշտ է կտինել տնկիների յուրաքանչյուր կապոցին։

4. Բաց փոխադրումներ (ևավաօմ)

Հակավորված փոխադրումը հուսալի յե, սակայն թանդ և և մեծ հոգս և պատճառում։ Դրա համար ել հաճախ տնկիների մեծ պարտիաները ուղղակի բաց վիճակում բարձում են վագոնների մեջ։ Այսուամենայնիվ, այս դեպքում ել տնկիները կապում են և կապերին պիտակներ փակցնում։ Վագոնի հատակի քրա մոտ 10 սմ հաստությամբ ծղոտ են փուռմ։ Կապերն այնպես են դասավորում, վոր տնկիների արձատներն ընկնեն վագոնի յերկայնական պատերի կողմը։ Իսկ գագտթները՝ ներսը։ Արմատների տակ և նրանց մեջ թաց մամուռ են զնում, իսկ ճյուղերի միջև՝ փափուկ ծղոտ։ Վագոնի պատերի և արձատների միջև ընկած բաց տարածությունը ևս ծածկում են մամուռով։ Վագոնի միջաւեղում, որտ գոների միջև աղատ տնցք են թողնում, իսկ վորպեսզի տնկիները չթափան, տախտակի հենաբաններով սրանց ամրացնում են։

Առաքման կայանում պետք ե նախորոք հոգակտոր առանձնացնել՝ տնկիները փոսերում պահելու համար, վորպեսզի սրանք այստեղ ապահով պիճակում մնան մրնչե վագոն բարձելը։

Տնկիները կարելի յե բաց փոխադրել միայն դեպքում, յեթե անպայման ուղեկցող լինի, վորը հետեւ տնկիների վիճակին, կազմակերպի տնկիների ժամանակավորապես թաղելու գործին, հակի բեռնելու և դատարկելու գործին, կարիքի դեպքում ուղափոխի վագոնը, ջրի տնկիները, ճանապարհին վորեն արգելքի գեպը միջոցներ ձեռնարկի վագոնը տնկիներով ճանապարհուում և այլն։



Ստացողին նախորդը պետք և զգուշացնել տնկիներն ուղարկելու մասին, վորպեսզի սո և իր հերթին միջոցներ ձեռք տանի վագոններն արագ բեռնաթափելու և տնկիներն անվտանգ վիճակում սուանալու հոժար:

5. Տուժած տնկիների կենսունակությաւնը վերականգնելու միջոցներ

Պատահում ե, վոր անկիները ճանապարհին կամ թե պահելու ժամանակ չորանում կամ թե ցրտահարվում են:

Յեթե տնկիներն այս վիճակում զեռևս անհուսալի չեն, պետք և աղխաղակ վերականգնել կենսունակությունը, յեթե վոչ բռնը, գոնե սրանց մեծ ժամը:



Նկ. 28. Հակի եյտանը

Ե. արմատներով ջրի մեջ դնել: Յեթե մի յերկու որվա ընթացքում տրմատներն ու զվերը ճկունանում են և դժվար են կոտըրվում՝ կեղել հարթանում ե, ուրեմն նշանակում ե, վոր ձեռնաբկած միջոցն ազդել ե:

Հարկավոր և տնկիները հնարավորին չափ շուրջ տնկել աեցում, կամ թե ժամանակավորապես թաղել, այսպիսով ապահովելով նրանց հետագա պահպանումը:

Պատահում ե, վոր ցրտահարման վերը նշված նշանները թույլ են նկատվում, Սակայն ստացողին հայտնի յե, վոր տնկիները շատ կամ քիչ տեսական ժամանակով մնացել են սառնամանիքների տակ: Այս դեպքում անհրաժեշտ ե առանց սրանց վրա գտնվող սառցի հաջմանն ապասելու, տնկիները դասավորել ասովելում և մի լով սառը ջուր սրսկել:

Աւժեղ ցրտահարված տնկիները, վորոնց վրա ցրտահարման նշանները պարզ նկատելի յեն, պետք և ետել մինչ առողջ մասերը:

Զորանալու նշաններն են՝ ճյուղերի հեշտությամբ կուրրավելը, թույլ խորշումած կեղել և այլն:

Ցրտահարված լինելը յերեան և բերվում կեղեկի վրայի մութ բծերով, փայտանյութի սևանալով և այլն:

Զորացած տնկիներն յերեան բերելուն պես պետք

6. ՏԱԿԻՆԵՐԻ ՔԹԳԾԵՐ

Ի՞նչպես արդեն տոված ե, գարնանը տնկելու համար նախատեսված տնկիները լավ ե աշնանը թաղել ու այս վիճակում պահել ձմռան ընթացքում։ Տնկիները պետք ե թաղել այս նպատակի համար նախատեսված հատուկ հողակտորներում, պահպանելով բոլոր այն կանոնները, վորոնք ցույց ելին տրված վայրակները թաղելու դեպքում։

Այստեղ առըբերությունը միայն այն ե, վոր համեմատարար ավելի խոշոր անկիների համար, քան վայրակներն ելին, պետք ե ավելի խոր առունեք փորել։

Մտանդարտի պահանջները չըավարող տնկիների մեջ կան այնպիսիները, վորոնք յենթակա յեն անմիջական վոչնչացման։ Այդպիսիներն են, որինակ՝ այն տնկիները, վորոնք առմասային քաղցիեղուից այնքած շատ են մասավել, վոր հիվանդ մասերը հնարավոր չե կտրել։ Այդպիսիներն ուղղակի պետք ե այրել։ Մյուս կողմից ել՝ թույլ վարակված տնկիների մասված մասերն հեռացնելուց հետո այդպիսիներն անպայման պետք ե յենթարկել ախտահանման, վորից հետո միայն նրանց հնարավոր ե տնկել այն ջրջաններում և տնտեսություններում, վորտեղ թույլ կտան հողային կազմակերպությունները։ Կարճ և անկանոն զարգացած արմատներով տնկիները և չնչին չափով ծովովածները կարելի յե ոգտագործել ճանապարհների յեզրերի, առուների, ջրանցքների ափերին անկելու համար և այլն։

ՏՆԿԱՐԱՆԻ ՀԱՇՎՈՒԽՄՆԵՐԸ

Տնկարանները տարբեր մեծության են լինում։ Յերկրային կամ մարզային խոշոր տնկարանների կազմակերպչական և արտադրական պլանների կազմելը խիստ բարդ գործ ե, վորը կազմողներից շատ աշխատանք և ընդհանրապես այգեգործությունից ու մասնավորապես անկանյութ պատրաստելու գծով հիմնական գիտելիքներ և պահանջում։ Անգամ բնավ հասարակ գործ չե համեմատաբար վոչ այնքան մեծ տնկարանների պլանի մշակումը։ Այդ պլաններն ես պիտի կազմեն փորձված այդեգործները, հաշվի տռնելով տեղական բոլոր պայմաններն ու տռանձնահատկությունները։ Վորպես որինակ բերենք պայմանական 12 հեկտար տարածությամբ տնկարանի մոտավոր հաշիվները։

Այդ տարածությունից, որինակ՝ $1\frac{1}{2}$ հեկտար պիտի հատկացվի մայր այգուն՝ պատվաստի կտրոններ ստանալու համար։ Այդպիսով, բուն տնկարանի համար մնում է $10\frac{1}{2}$ հեկտար իր հիմական բարոր մասերով իսկական տնկարանի տարածության 15 տակտուր կընկնի ճանապարհների և ցանքապատի տակ վորը կկազմի մոտավորապես $1\frac{1}{3}$ հեկտար։ յուրաքանչյուր դաշտն ընդունելով մեկ հեկտար՝ տնկարանին, վողջ ձեռվորման հողամասի տնկիների յոթքաշայան ցանքաշրջանառության դեպքում՝ կարիք կլինի հատկացնել 7 հեկտար։ Մնացած յերկու հեկտարի վրա կարելի յե կազմակերպել սերմի, կտրոնների և անդալիսի բաժիններ, ջերմոցներ, սանթլանցներ, բանվորների և ծառայողների համար անհրաժեշտ ջենքեր, զբասենյակ, գույյթի և նյութերի պահեուներ, կահավորման սրահներ, մառաններ և այլն։

Առանձին դաշտերի համար մեկ հեկտար հատկացնելը բավականին շատ ե։ Ուստի հարկավոր և այն բաժանել յերկուական հողակտորի, յուրաքանչյուրը 5000 քառ. մետրից։ Ամեն կերպ պետք և աշխատել, ըստ հնարավորին, մեքենայացնել աշխատանքները։ Այդ գեպքում միջնարքային տարածությունները ձիով մշակելու հնարավորությունը ապահովելու համար պետք և նրանց լայնությունը վերցնել 90—100 մետր, 90 մետր վերցնելու դեպքում տնկարանի առաջին դաշտում պետք և տնկել մոտավորապես 31.000 վայրակ։

Այսպես, ցանքի համար հարկավոր և մոտ 220—250 ք. մետր տարածություն, իսկ վերատնկման համար՝ 1500—1600 ք. մետր։ Կտրոնների և անդալիսի բաժինների չափը կարելի յե սահմանել միայն տնկարանի այն վայրակների տեսակարար կշռի համեմատ, վարոնք ստացվում են կտրոնների և անդալիսների միջոցով։ Ընդհանրապես սրանց տարածությունը մեծ չի լինում։

Այդպիսով անառեղերի համար մնում և բավականին ընդարձակ տեղ։ Տնկարանին անհրաժեշտ բանվորական ուժի պահանջը շատ անհամաչափ և լինում տարբեր ամիսներին։ Այդ հանդամանքը մեծապես զժվարացնում և բանվորական հաստիքների հարցը։ 12 հեկտար տարածությամբ տնկարանի համար անհրաժեշտ ե, ինարկե, առանձին մասնագետ-այգեզործ՝ կտրավարչի պաշտոնով, վոր վողջ տարին պիտի զբաղված լինի։ Զմբան ընթացքում նա պետք և կազմակերպչական ու նախապատրաստական մի շարք աշխատանքներ կտարի։

Տնկարանի գլխավոր աշխատանքները տարվում են բացա-

ապագիս ապրիլ - հոկտեմբեր ամիսներում։ Այդ ժամանակամիջու-
ցում պետք է ունենալ 10-ից զոչ պակաս վորակյալ և 20-ից վաշ
պակաս զարգացյին բանվոր։ Հիշված վորակավոր բանվորներից
ցանկալի յե մեկական բանվոր տառածնացնել վորագիս ավագ՝
վայրակների բազմացման հողամասի, ձեւավորման հողամասի և
մայր այգու համար։

Մի քանի ամիս (հունիս, հուլիս, սպուտոս, սեպտեմբեր)
բանվորների նշված քանակը ի վեճակի չի լինի կատարելու տըն-
կարանի բազմապիսի և շուտպ աշխատանքները։ Նման լորդած
ժամանակին, ավելի մատչելի աշխատանքներ կատարելու համար
(քաղաքն, փխթեցում, վոռոգում), կարելի յե տվյալ տնկարանն
ընդգրկող խորհունակության կամ կոլտնահառության այլ ճյուղե-
րից բանվորներ բերեց։ Հակառակ սրան, այն ամիսներին, յերբ
տնկարանի բանվորներն պարապ են մնում (ապրիլին, մայիսին
և հոկտեմբերին), նրանց մի մասին ոկեան և ուզարկել ընդհանուր
տնտեսություն։

ԲԱԳԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողին	2
Ինչ և պտղատու տնկարանը	3
Պտղատու տնկարանի տեղի բներությունը	3
Պտղատու տնկարանի արտօքին պատմագնությունը	6
1. Ինչպես կառուցել տնկարանի եժանագին և հուսալի ցանկապատ	6
2. Ինչպես պաշտպանել ցանկապատը	6
Բույսերի բազմացման ձեվերը	7
1. Բույսերի սերմերով (սեռական կամ վերաբուդրական) բազմացումը	7
2. Բույսերի անսեռ (վեգետատիվ) բազմացումը	7
3. Սերմերով և վեգետատիվ յեղանակով բազմացման կիրառումը պտղատու տնկարանում	7
Պտղատու տնկարանի հիմնական մասերը	8
1. Բազմացման հողամաս	8
2. Սերմնային բաժին	9
3. Անդալիսի բաժին	9
4. Զեավորման հողամաս	10
Պտղատու տնկարանի պլանը կազմելը	10
Տնկարանի հողի նախապատրաստելը	11
Ինչ և բույսի պատվաստումը	14
1. Ընդհանուր հասկացողություն պատվաստի մասին	14
2. Պտղատու հիմնական տեսակների կարկորագույն պատվաստակալները	15
Տնկարանու պատվաստակալները	15
Տնիձենու պատվաստակալները	16
Ստլունու պատվաստակալները	18
Կեռասենու պատվաստակալները	19
Բալինու պատվաստակալները	20
Պատվաստի համար վորտեղից կտրոններ վերցնել	21

Ապահովանքները բազմացման հոգամասում	22
1. Պատվաստակալ ստանալու համար վորուեղից սերմեր վերցնել	22
2. Պոտուղներից ինչպես հանել սերմերը	28
3. Լավագույն սերմանյութի ընտրությունն ու նրա պահպանումը	24
4. Սերմերի նախապատրաստումը ցանքի համար	26
5. Ցանք կատարելը	28
6. Ցանքի խնամքի աշխատանքները սերմային բաժնում	34
Վայրտկների բազմացումն անդախով յել կերոներով	38
Վայրտկների հանելը, տեսակավորելն ու պահպանելը	41
Տնկարանի կամ ձեվակորման հողամասի կառուցվածքը	44
1. Ցանքաշրջանառությունը տնկարանում	44
2. Դաշտերի և հողակտորների (կվարտալ) հատակագծումը .	45
3. Հողի մշակությունն ու պարարտացումը	45
Վայրտկների տեկելն ու խնամքը ձեվակորման հողամասում	48
1. Վայրակների տնկումը	48
2. Վայրակների խնամքը տնկարանի առանձին դաշտում .	51
Պատվասում	51
1. Աչքապատվասաը վորուեն վայրակների ողնվացման կարեռագույն միջոց	51
2. Պատվաստի այլ ձևերը	58
Կերտապատվասեթի տեխնիկան, պատվաստի ձեվերի յել ժամ- կեների ընտրույթը	59
Պատվասած բայսի խնամքը	61
1. Միամյակներ ստանալը	61
2. Ցերկամյակներ ստանութեան	63
Փափոխված լիդերային յեղանակի առանձնահատակությունները	66
1. Մառերի ընի բարձրությունը	66
2. Մազարթի հիմնական ճյուղերի միջև յեղած տարա- ծությունը	67
3. Մազարթի հիմնական ճյուղերի քանակը	67
4. Գլխավոր ճյուղերի դասավորությունը սաղարթի շուրջը	68
Փոփոխված լիդերային յեղանակով սաղարի ձեվակորման տեխնիկան	68
1. Մասի սաղարթավորումը մեկ հիմնական ճյուղով	68
2. Մասի սաղարթավորումը՝ սաղարթի յերկու ճյուղ պահելով .	69

3. Ծառի շվերի 2-րդ ձերատումը	69
4. Ձեավորման շարունակելը յերկրորդ տարում	70
5. Ծաղարթի գլխավոր ճյուղերի ետք 2-րդ տարում	70
6. Ծաղարթի հաստացման ճյուղերի կարելը	71
7. Կմախքային յերկրորդական ճյուղերի ամեցումը	71
8. Ծառի ձևավորումը յերբորդ տարում և հետագայում	72
9. Կենտրոնական տառնցքային ճյուղերի ետք	72
10. Խնամքի աշխատանքները: Վնասատուներ ու հիվանդություններ և պայքարը նրանց դեմ	72
Տեղիները հանելն ու փխառքելը	75
1. Տնկիներից պահանջվող վորակը	75
2. Տնկիներ հանելու աշխատանքները	76
3. Տնկիների տեսակավորումը, հակավորութիւնը ու փոխադրումը	78
4. Բաց փոխադրութիւններ (հավալոմ)	79
5. Տուժած տնկիների կենսունակությունը վերականգնելու միջոցները	80
6. Տնկիների թաղելը	81
Տեկարանի հաւաքումներ	81



Գառա. խմբ. Ա. Յափառջյան, Ցև. Նազարյան

Տելի. խմբադիր՝ Հ. Մուրտոյան

Լեղի. խմբ. Արք. Գրիգորյան

Սրբադրիչ Խ. Այգապյան

Գևագինի Լիսկոր Ռ-439, հրամար. ԱՖ 297, ակրաժ 3000, պատվեր ԱՖ 42

Հանձնվել և արագըստյան 1926 թ. Կունվարի 23-ին

Առողջութան և ապացրելու 1926 թ. վետրվարի 7-ին

51/2-առ. թերթ. մեկ առ. թերթում 86480, առց. նշ.

Գյուղերատի Տպարան, Յերեան, Նալբանդյան 11

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0008496

4168 70 ЧАР.

A 11
18731



БИБЛИОТЕКА КОЛХОЗНИКА И РАБОЧЕГО СОВХОЗА

ПРОФ. М. А. НОВИКОВ-ГОЛОВАТЫЙ

ПЛОДОВЫЙ
ПИТОМНИК

СЕЛЬХОЗГИЗ-ЭРИВАНЬ 1936